

20.248

21

329.14

12-46

1928

~~264~~

Գ. ՂԱՐԱԶՅԱՆ (Ս. Տ. ԱՐԿՈՄԵԴ)

15 JAN 2010

05 FEB 2007

329.14

Դ-46

ՌՌԻԲԵՆ ԽԱՆԱԶԱՏԻ Հ Ե Ք Ի Ա Թ Ն Ե Ր Ը

(Ո՞վքեր են հնչակյանները յե՛վ ի՞նչ են ասում նրանք
իրանց մասին)

1928 թ.

329.143Գ. ՂԱՐԱԶՅԱՆ (Ս. Տ. ԱՐԿՈՄԵԴ)

2-46

ՌՈՒԲԵՆ ԽԱՆԱԶԱՏԻ Հ Ե Ք Ի Ա Թ Ն Ե Ր Ը

(Ո՞վքեր են հնչակյանները յե՛վ ի՞նչ են ասում նրանց
իսանց մասին)



1928 թ.

1264#
1628-

19 JUN 2013

20. 215



4317-91

1714-58

Թիֆլիս, Ժ.Տ.Բ.Պ. Գոլիցրաֆարեստի 4-դ սպ., Գուշկ. փող. № 3
Իրանեպ. № 237. Տիրաժ 1000.

Վերջերս միայն ձեռքս ընկավ Բոստոնում հրատարակվող դաշնակցական «Հայրենիք» ամսագրի 1927 թ. հունիս և հուլիս ամիսների 8 և 9 №№-ը, վորոնց մեջ գետեղված են, ի միջի այլոց, Սանազատի «հայ հեղափոխականի հուշերից» հոդվածները: Այդ գրության մեջ կարելի է գտնել պատմական գեպքերի և անցքերի այնպիսի Փալսիֆիկացյա, այնպիսի մտացածին, կեղծ ու շինծու «հուշեր», վորոնց առիթով կարելի է միայն դարմացմամբ բացականչել թե սեւ և ինչի՞ համար են այդ բոլոր հեթի-աթները գրվում: Սոսք չկա, վոր նա հավակնություն ունի գրելու իր հեթիաթները պատմության համար. դրա համար ել նա հենց սկզբից իր «հեղափոխականի հուշերի» նախաբանում («Յերկու խոսք») չափազանց լուրջ տոն և ընդունում, վոր միանգամայն չէ համապատասխանում իր առասպելական պատմության, իր հեթիաթապատումին: Հուշերը, իհարկե, նշանակություն ունեն պատմության համար. վոմանք հուշերի հիման վրա հենվելով՝ գրում են և լուսարանում պատմական անցյալի այս կամ այն կողմը, այս կամ այն եջը հաճախառանց հաշվի առնելու և ստուգելու, վոր նրանց հեղինակը վոչ թե միայն կարող եր սխալվել հիշողության հիման վրա այս կամ այն գեպքի կամ յերևույթի ժաան գրելիս, այլ նույն իսկ գիտակցարար ստեղծել, կեղծել, խեղաթուրել, հնարել, ցույց տալ սեր սպիտակ և ընդհակառակը՝ վորոշ անձնական և այլ նպատակների համար: Այս վերջին տեսակի «հուշեր» գրողներից է հնչակյան մղձավանջի մեջ մինչև այսօր թավալվող Սանազատը:

Առաջին անգամ չե, վոր նա այդպիսի «հուշեր» է գրում: 1907 թ. նման հուշերով նա հանդես յեկավ Հրահատի (Գր. Վարդանյանի) հետ միաժամանակ՝ Թիֆլիսում այն ժամանակ հրատարակվող անկուսակցական (ավելի շուտ հնչակյան) «Յերկրի Չայն» շաբաթաթերթի եջերում: Ինկատի ունենալով Սանազատի կեղծիքներին գիմելու արագիցիոն փեշակը, ինձ առիթ ներկայացավ այն ժամանակի նույն «Յերկրի Չայն»-ի եջերում*) խմբագրության ուղղած մի նամակով պարզելու և ապա մի մեծ յոգ-

*) Տես № 24 1907 թ.

վածով նրա 1908 թ. հունվարի առաջին համարներում հաստատելու Սանազատի պատմութեան ֆալսիֆիկացյան: Չնայելով այդ բանին՝ նա հետագայում շարունակեց ամենայն սանձարձակութեամբ նույն իր հեքիաթային պատմութիւնը, ինչպես 1922 թ. Թավրիզի հնչակյան «Ջանգ» թերթում, այնպես ելներկա 1927 թ. Բոստոնի դաշնակցական «Հայրենիք» ամսագրում:

Յես անուշադիր կթողնեի և ամենևին նշանակութիւն չէյի տա «հեղափոխական» Սանազատի մտքի արտագրութիւններին, յեթե ի նկատի չունենայի այն հանգամանքը, վոր մեր յերկրի քաղաքական պատմութեան մասին վորեւէ բան գրելիս կգտնվին այնպիսիները, վորոնք առանց ստուգելու կարող են, դժբախտաբար, ոգտագործել Սանազատի նման անբարեխիղճ մարդկանց ասածն ու գրածը, հալած յուղի տեղ ընդունել այդպիսիները հաղորդած տեղեկութիւնները, ինչպես այդ պատահել է անցյալում: Այսպես որինակի համար Դ. Անանունը, հիմնվելով Սանազատի տված տեղեկութիւնների վրա՝ իր գրքի 2-րդ հատորի մեջ Հնչակյան կուսակցութեան հիմնադիրների շարքն է գասել նաև տողերիս գրողին, ինչպես և В. Невский-ն նույն տեսակ մի սխալ ինֆորմացիայի հիման վրա կրկնում է նույնը իր «Очерки по истории РКП (б.)» գրքում:

Նախ և առաջ մի հարց պետք է հենց սկզբից պարզել: Սանազատը տողերիս գորդին հայտարարում է «նախկին հնչակյան», «Հնչակյան կուսակցութեան հիմնադիր», «Հնչակ» թերթի աշխատակից, «Հնչակ. կուսակցութեան ծրագիրը կազմող հանձնախմբի անդամ» և այլն: Ընթերցողը կարող է հարց տալ. «եհ, ի՞նչ անենք. ինչ վատ բան է ասում և գրում Սանազատը. ի՞նչ կա այստեղ դժգոհելու և նիզակներ ճոճելու այդ առիթով»: Այդպիսի մի վերաբերմունք գեպի հարցը պետք է համարել սխալ և թեթև: Որինակի համար, յերբ յես սրանից մի քանի տարի առաջ Դ. Անանունին նկատեցի, վոր նա իր գրքի 2-րդ հատորում Սանազատի սխալ տեղեկութիւնների հիման վրա ինձ ևս գասել է Հնչակյան կուսակցութեան հիմնադիրների շարքը, նա պատասխանեց. «Եհ, ի՞նչ կա վոր, ինչ կարեոր բան է դա, յեթե նույն իսկ սխալ լինի»: Մի ուրիշ որինակ. յերբ իմ քաղաքական պանդխտութեան վերջին տարիներին յես առիթ ունեցա մի քանի անգամ հանդիպելու արտասահմանում Ավ. Նազարբեկին, յես նրան, ի միջի այլոց, հայտնեցի թե ինչպես Սանազատը իր «հուշերը» գրելիս ինձ ևս մասնակից է դարձնում Հնչ. կուսակցու-

թեան ծրագիրը կազմող հանձնախմբի աշխատանքներին և դասում հիմնադիրների շարքը, նա ևս այդ առիթով ասաց գրեթե միևնույնը. «եհ, ի՞նչ անենք. Հնչ. կուսակցութեան հիմնադիր լինելը անպատվութեան էս համարում, ի՞նչ է»: «Անպատվութեան» կամ պատվի հարց չե կարող լինել այստեղ. յեթե մեկին կուսակցութեան հիմնադիր հայտարարելը նույն իսկ պատիվ համարվի նրա համար, այնուամենայնիվ անարժան և տգեղ վարմունք է պատմութեան խեղաթյուրումը, հատկացնելով մեկին մի դեր, վոր յերբեք նա չե կատարել: Պատմութեան ֆալսիֆիկացիան մնում է ֆալսիֆիկացիա, գրական տգեղութիւն, ինչ նկատառումներով և նըպատակներով ել նա կատարված լինի:

Բայց ինչ վոր գլխավորն է այստեղ, դա պատասխանատվութեան հարցն է, վորին նման դեպքերում գերազանց նշանակութիւն պետք է տալ:

Յես յերբեք իմ յերկարամեա կյանքի ընթացքում վոչ հնչակյան եմ յեղել և վոչ ել դաշնակցական: Այն դժոխքը, վոր ստեղծեցին մեր իրականութեան մեջ հնչակյան և դաշնակցական ազգային կուսակցութիւնները, այն ռեակցիոն քաղաքական ղեկը, վոր նրանք խողացին հատկապես մեր ռուսահայ, կովկասահայ բանվորութեան հեղափոխական-քաղաքական շարժումների պատմութեան մեջ՝ ինքնըստինքյան մի այնպիսի իրողութիւն է, վորի պատասխանատվութեան ամենաչնչին բաժինն անգամ սոցիալիստը և կոմունիստը իրան վրա յերբեք վերցնել չեր ցանկանալ: Ի՞նչ անուն կտայիք այն մարդուն, վորը անցյալում իր գործած սխալմունքներին, հանցանքներին մասնակից և պատասխանատու է դարձնում նաև ուրիշներին, վորոնք կապ չեն ունեցել ամենևին նրա հանցավորութեան հետ: Կովկասյան սոցիալդեմոկրատիայի քաղաքական պատմութեան մեջ տեղի ունեցած դրական կամ բացասական դեպքերի համար պատասխանատվութիւնը վորոչ չափով կարող է ընկնել տողերիս գրողի վրա, վորովհետեւ հենց սկզբից նրա ծագման և զարգացման ընթացքում նա պատասխանատու, ակտիվ դեր է ունեցել: Բայց նման մի դեր վերագրել նրան ստաք կուսակցութեան, ներկա դեպքում Հնչակյան կուսակցութեան հիմնադրութեան պատմութեան մեջ, դա մի այնպիսի վարմունք է, վորը յես գտնում եմ տգեղ և միանգամայն միտումավոր վարմունք:

Դառնանք այժմ գլխավոր նյութին, քննենք կետ առ կետ թե ի՞նչ առակներ է պատմում Սանազատը «Հնչակ» թերթի

և կուսակցութեան ծագման մասին, ունի ինչպիսի դերեր և նա
հատկացնում:

Հեկիաք առաջին: Նախ և սուաջ Խանազատը իր հեքիաթա-
շարքը սկսում է նրանով, վոր Հնչակեան կուսակցութեան հիմնա-
դիր խումբը կազմող անդամների թիվը նա դարձնում է 6, մինչդեռ
նրանցից միայն 4-ին պետք է համարել հիմնադիր: Նա մարդկանց
տալիս է այնպիսի բնորոշում, վոր չէ համապատասխանում իրա-
կանութեան. վերագրում է խմբի անդամներին այնպիսի դեր և նը-
շանակութիւն, վոր նրանք յերբեք չեն ունեցել: Այնպես է դուրս
գալիս, վոր նրանք իրենցից ներկայացրել են սոցիալիստի և հեղա-
փոխականի կատարելատիպը, վոր նրանք կազմակերպված, համոզ-
ված, լուրջ քաղաքական գործիչներ են յեղել, Մինչդեռ իրականու-
թիւնը միանգամայն այլ պատկեր է ներկայացրել. յես կներ-
կայացնեմ այդ իրականութիւնը այնպես, ինչպես յես տեսել եմ
և ճանաչել:

Հիմնադիր խմբի անդամներն էլին. Նազարբեկեան ամուսին-
ները (Ավետիս և Մարո), Ռուբեն Խանազատը և Գարբիել Կա-
ֆյանը: Խանազատը նրանց շարքն է դասում նաև վորպես Հնչ-
կուսակցութեան հիմնադիրներ՝ Քրիստ. Ոհանյանին և տողերիս
գրողին:

Քր. Ոհանյանը, վորը բժշկական ֆակուլտետի ուսանող էր
ժընեվում, շուտով հեռացավ հիշյալ խմբից և 90 թվականին դաշ-
նակցութեան հիմնվելուց յետո՛ւ անցավ նրա շարքերը: Իսկ մի
քանի տարուց հետո նա, յեթե յես չեմ սխալվում, մաս-
նակցեց Խանասորի արշավանքին (1897 թ.): Կուսակցութեան
հիմնադիր լինելու հասկացողութեան հետ կապված են գոր-
ծող անձի կատարած վորոշ ֆունկցիաներն ու կարևոր ծառա-
յութիւնները: Իսկ Ոհանյանին, չխոսելով արդեն այն բանի մա-
սին, վոր նա գործում էր վոչ լուրջ անձնավորութեան տպավո-
րութիւն, չէ կարելի «Հնչակ»-ի ժընեվի կազմակերպութեան, ևս
առավել կուսակցութեան հիմնադիր համարել, քանի վոր նա իրեն
շատ հեռու էր պահում խմբից, շատ սակավ էր լինում նրա հետ,
վոչ մի դեր չէր խաղում և չէ խաղացիլ խմբի վորևէ ձեռնար-
կութեան մեջ թե անցյալում և թե ապագայում:

Ինչ վերաբերում է տողերիս գրողին՝ պետք է ասեմ, վոր
իմ ծանոթութիւնը և կապը խմբի հիշյալ անդամների հետ յեղել
է միայն պատահական և շատ կարճատև: 1886 թվի աշունքին
տեղափոխվելով Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքից Շվեյցարիա՝ ինձ

հետ միասին յեկավ այնտեղից ժընեվ Գ. Կաֆյանը: Իբրև թե
վերջինիս տված տեղեկութեան վրա հիմնվելով՝ Խանազատը գրում
է թե ամբողջ մի վագոն լիքը ուսանողներ էին յեկել Մոնպելի-
եից ժընեվ Կաֆյանի ձեռ: Մենք միայն յերկուս էլինք. միթե
յերկուսը, վորոնցից մեկը ինքը Կաֆյանն էր, նշանակում է ու-
սանողներով լիքը մի վագոն: Վոր Խանազատը հեքիաթաբան է,
այս անշան յեղելութիւնն էլ դրա մի ապացույցը: Մեզնից հե-
տո Մոնպելիեից ժընեվ յեկան դարձյալ 2 ուսանողներ՝ Պողոս
Աֆրիկեան և Մատթեվոս Շահաղեղյան: Բայց նրանք ամենևին
չմտեցան Նազարբեկեան ամուսինների խմբին. հայ ուսանողնե-
րից շատ շատերը փախչում էլին Նազարբեկեան ընկերութիւնից:

Յես զժբախտութիւնն ունեցա խմբի հետ ծանոթանալու և
հարաբերութեան մեջ գտնվելու միայն մի քանի ամիս: Նրա ան-
դամների մեջ նկատելի էր վորոշ հեղափոխական տրամադրութիւն:
Փոքր ի շատե հեղափոխականորեն տրամադրված հայ յերիտա-
սարդ ուսանողները Մարսելում հրատարակվող Մկրտիչ Փորթու-
գալյանի «Արմենիա» թերթն էլին կարդում այդ ժամանակ: Նը-
րանցից կարող ուժերը նույն իսկ աշխատակցում էլին, թղթակ-
ցում այդ թերթին: Սակայն Փորթուգալյանի թերթը, վորը վոր-
պես «ազգասիրական» թերթ, սվելի շուտ արտասահմանյան վաճա-
ռականների համար էր հրատարակվում քան ուսանող և ոչ ուսանող
հեղափոխական տարրերի համար. նա չէր բավարարում վերջիննե-
րի պահանջներին: Ժընեվի խումբն էլ զժգոհ էր սաստիկ «Արմեն-
յա»-ից: Նա բաց թողեց Նազարբեկեանի ձեռքով գրված խիստ և
կծու լեզվով մի պամֆլետ (հեկտոգրաֆի վրա) Փորթուգալյանի
դեմ. դա յեղավ խմբի առաջին «հեղափոխական» յելույթը: Իրա-
նից հետո՛ խումբը հետամուտ յեղավ հայերեն լեզվով մի հեղա-
փոխական թերթ ունենալու: Թերթը հրատարակելու նախաձեռ-
նութիւնը պատկանում էր Նազարբեկեան ամուսիններին: Նյու-
թապես ապահովված մարդիկ լինելով՝ նրանք հնարավորութիւն
ունեցին այդ գործը գլուխ բերելու: Վորպես մի հեղափոխական
թերթի՛ յես իմ պատրաստակամութիւնը հայանեցի աշխատակ-
ցելու: Վենետիկյան Միլիթարյան միաբանութեան տպարանին
պատվեր ուղարկվեց հայկական տառերի անհրաժեշտ քանակու-
թիւն պատրաստել և ուղարկել, վորը և ստացվեց 1887 թվի ա-
մառը:

Մինչև այդ՝ խմբի անդամների մեջ տեղի ունեցին «անվերջ
խոսակցութիւններ և վիճաբանութիւններ», ինչպես Խանազատն

ել վկայում ե*) , գաղափարական տարաձայնութիւններ, վերին աստիճանի վրդովեցուցիչ հակաընկերական տգեղ դեպքեր և յերևույթներ, վորոնց մասին ակնարկ անգամ չեք գտնի Խանազատի «հուշերի» մեջ

Հեկիաք յերկրորդ: Խանազատը համառութեամբ պնդում է, վոր յես հեռացա խմբից «Հնչակ» թերթի առաջին №-ի համար իմ պատրաստված հոդվածի մերժման հետևանքով: Նա գրում է: «Նա սաստիկ վերավորված թողեց և ընդմիշտ հեռացավ մեզնից»... «Մոնպելիէից նամակագրութեամբ շատ աշխատեցի համոզել Ղարաջանին նորից դեպի մեզ վերադառնալ, բայց իրողը. նա անդրովելի մնաց...» «Զնայելով, վոր նա միուս ընկերներից վոչ պակաս եր յերազել Հայաստան գնալու և այնտեղ գործելու մասին, բայց և այնպես այդ փութիկ վիրավորանքը (ընդգծումը մերն է. Գ. Ղ.) բավական յեղավ, վոր նա ընդմիշտ հրաժարվի Հայաստան գնալու գաղափարից»:

Այսպես է «նաղլ» անում մեր հայազգի հնչակյան Յեզոպոսը:

Տեսնենք ինչպես է յեղելութիւնը կատարվել: Իմ խմբից հեռանալու պատճառը, հարկավ, չեր կարող լինել հոգվածիս մերժումը. ուրիշ շատ պատճառներ կային. արժե զբանց մասին մի քանի խոսք ասել:

Յես սասցի, վոր խմբի գոյութեան առաջին ամիսներին, յերբ դեռ շարունակում էի նրա հետ պահպանել իմ կապը, տեղի էին ունենում շարունակ տարաձայնութիւններ գաղափարական հողի վրա, «անվերջ վիճաբանութիւններ», անախորժ ընդհարումներ: Խանազատը հերքում է բացարձակապես մեր մեջ տեղի ունեցած սկզբունքային տարաձայնութիւնները*): Իհարկէ մեզնից վոչ վոք իրան այն ժամանակ չեր անվանում նարողովոյցի, սոցիալ-դեմոկրատ և այլն: Բայց քաղաքական-հեղափոխական հարցերի շուրջը տեղի ունեցած վիճաբանութիւնների ընթացքում շատ պարզ յերևում եր թե մեզնից վորն եր թեքվում դեպի այս կամ այն հոսանքը: Միայն կույր պետք եր լինել, խելքից, ըմբռնելու կարողութիւնից զուրկ՝ այդ բանը չտեսնելու համար: Քիչ առիթներ չեն յեղել ինձ տերրորի բացասման մասին խոսելու, բանվորական ինտելլիգենցիա պատրաստելու ան-

*) Տես «Յերկրի Ձայն» № 26, 1907 թ.

*) Ibid

հրաժեշտութեան և այլ հարցերի մասին վեճի բռնվելու Նազարբեգյան ամուսինների հետ և ամեն անգամ յես նրանց կողմից հանդիպել եմ հեզնանքի, արժանացել «Ֆրագյոր» տիտղոսի: Անկարելի է, իհարկէ, այժմ մեկ մեկ հիշել այն բոլոր սկզբունքային հարցերը, վորոնք մեր մեջ տարաձայնութիւններ էին առաջ բերում: Բայց պարզ եր մի բան. Նազարբեգյան ամուսինների և նրանց շուրջը պտտվող մոլորակների մեջ նկատելի յերթեքումն դեպի բակունիզմը մեղջանականութեան անագին դողով, լավագույն դեպքում դեպի նարողովոյցիութիւնը, վորի համար ամեն ինչ եր տերրորը. իսկ տողերիս գրողին այդ ժամանակ համակել եր սոցիալդեմոկրատական, մարքսիստական հոսանքը: Այս բանն եր, վոր մեր մեջ բաց եր անում խոր անդունդ, իմ հոգվածիս առիթով հարուցած վեճը և նրա մերժումը հաստատում եր միայն այդ բանը:

Բայց Խանազատը կատարյալ լուութիւն է պահպանում այն բանի մասին թե ինչպիսի հակաընկերական, տգեղ արարքներ և յերևույթներ էին տեղի ունենում իմրի անդամների մեջ: Նրանց փոխհարաբերութիւնների այդ մոմենտը յես գտնում եմ շատ կարևոր. նրա լուսաբանումը շատ բաների հետ կարող է պարզել նաև խմբից իմ ընդմիշտ հեռանալու դեպքը:

Հենց սկզբից յես գտա ժընեվյան խումբը տարրինակ մարդկանց մի խումբ. նրա անդամները բոլորովին տարբեր տեմպերամենտի, տարբեր միջավայրի, տարբեր կրթութեամբ և հակումներով երիտասարդներ էին, վորոնք ընավ իրար չէին հասկանում: Առաջին ջութակ նվագողը—Ավետիս Նազարբեգյանը թավրիզեցի մի շատ հարուստ վաճառականի վորդի և հանգուցյալ հայտնի միլիոնատեր Մելիք-Ազարյանի քրոջ վորդին՝ գրեթե պատանեկական հասակից արտասահմանում (Պարիզում) ապրելով ստացել եր արիստոկրատական-մեղջանական կրթութիւն. իրան բանաստեղծ հորջորջող, Ֆրագյոր, դեմքով գեղեցիկ, զգայուն մի յերիտասարդ եր, վորի իշխելասիրութիւնը և դիկտատորական հակումները չափազանց աչքի էին ընկնում: Զգացմունքի և կրքի գերի անձնավորութիւն լինելով նա պատրաստ եր իրեն համար անախորժ մի դեպքի առիթով իր մոտ ընկերսը անպատվել, տանից դուրս անել և այլն: Նա իրեն ընկեր եր գտել հանձին իր ամուսին Մարո Վարդանյանի, վորը թիֆլիզեցի նույնպես հարուստ մեղջանական ընտանիքի գավակ եր: Սա ավելի ուժեղ կամքի տեր եր քան Ավետիսը. նրա կանացի մեղջանական կապրիզ-

ների և դիկտատորութեան առաջ նահանջում եին ամենքը: Բուրժուական ինտելիգենտական միջավայրից յեկելով՝ Մարոն այն տիպերից էր, վորոնք յիւրացնելով միայն հեղափոխական ֆրագեոլոգիան՝ իրանց կյանքի ընթացքում բնավ չէյին կարգում և չէյին սովորում: Թե նա և թե իր ամուսինը մշտապես կարված հայ իրականութունից, միանգամայն անծանօթ հայ ժողովրդական կյանքին, վճռել էյին այդ ժողովրդի դեկավարը հանդիսանալ, նրա բախտը վորոշել:

Մարոն հայերեն չգիտեր, և շատ զարմանալի մի երևույթ չնայելով, վոր հայերեն չգիտեր, բնավ ծանօթ չէր հայ իրականութեան հետ և յերբեք վոչ մի կապ չէր ունեցել նրա հետ, նրա մեջ, այնուամենայնիվ, նկատելի էր անարխիստական հակումներով ազգայնականի տրամադրութուն: Յերխասարզ ամուսինների սերը այն աստիճան էր շեղված, վոր Ա. Նազարբեկյանը, ընդառաջելով միշտ այդ զգացմունքի պահանջներին՝ վորձում է հետագայում թարգմանել Մարքս-Էնգելսյան «Կոմ. Մանիֆեստը» և հրատարակում վոչ իր անունով, վորպես թարգմանիչ, այլ իր կնոջ՝ Մարո-ի անունով, վոր հայերեն չգիտեր:

Գ. Կաֆյանը շուշեցի վաճառական ընտանիքից էր, հարուստ վաճառականների յեղբայր, ապահովված ուսանող, ապահովված էր նույնպես Քր. Ռհանյանը: Ռ. Սանազատը ստանում էր բավարար ամսական իր բարեկամ սպա Սամարթյանից: Նրանց բոլորի մեջ յես էի միայն պլեբեյը, վորպես թոշակավոր Բազմի մեծանուն Մարզախրական ընկերութեան՝ տարեկան ստանում էի միայն 150 ուրլի...

Յես իմ ամբողջ կյանքի ընթացքում չեմ պատահել ընկերների մի խումբ, վորի անդամները այն աստիճան հակաընկերական, շինծու, արհեստական, կեղծ, շողոքորթ հարաբերութեանների մեջ լինէյին, ինչպես ժընեվի խմբի անդամները միմիանց հետ:

Նազարբեկյան ամուսիններն իրենց ձեռքի տակ էյին պահում խմբի անդամներին և նրանց հետ վարվում էին այնպես, ինչպես կվարվէյին մանկավիճիկների հետ. սրանք նրանց հլու հնադանդ կամակատարներն էյին: Յեթե մի նոր ուսանող էր գալիս ժընեվ և դժբախտութուն ուներ Նազարբեկյանների ծուղակի մեջ ընկնելու, պրծավ. նա այնտեղից այլևս չէր կարող դուրս գալ ամիսներով և տարով: Նա վոչ կարողանում էր ինքնուրույն պարապել, սովորել, ոչ էլ հաճախել համալսարան: Բակունին է և այլ

վորե է մի անարխիստի ազդեցութեան տակ մի տեսակ վորոմելի մտայնութուն էր տիրում այդ ժամանակ արտասահմանի ուսանողութեան վորոշ շրջաններում. «Բուրժուական համալսարաններում», «բուրժուական պրոֆեսորներին» մոտ սովորելը զուր ժամավաճառութուն է, վորից պետք է խույս տա, հեռու լինի հեղափոխական յերիտասարդութունը: Նույն յերևույթը նկատելի էր և ժընեվի խմբի անդամների մեջ. նրանք չէյին սովորում... և խեթ աչքով էյին նայում նրանց վրա, վորոնք սովորում էին ձնշում, անարգանք, սարկացում և այլ վրդովեցուցիչ հակաընկերական դեպքեր և յերևույթներ, վորոնք տեղի էին ունենում խմբի անդամների մեջ, չափազանց անախորժ գրութուն էին ստեղծում: Կեղծիքը և յերկզքիմութունը այս գրութեան մեջ կատարում էին իրանց գերը: Սմբի ճնշված, անարգված ընկերոջ մնում էր միայն դժգոհել, գանգատվել, վոր այսպես յերկար շարունակվել չէ կարող: Նազարբեկյաններին ճշմարտութունն յերեսին ասել չէյին համարձակվում, այլ խոսում էին յետեից, պարսավում նրանց արարքները, ծաղրում նրանց և այլն: Բանն այնտեղն էր հասել, վոր Նազարբեկյանները իրանց ընկերների կողմից վաստակել էին «ֆոկուսնիկներ», «կոմեդիանտներ» անունը: Յեվ հաճախակի այդ ածականները տալիս էր նրանց վոչ այլ վոք, բայց միայն Սանազատը:

Շատ տարրինակ էր տեսնել, վոր ժընեվի ուսանողներին գաղութի կյանքից կտրված՝ բոլորովին առանձնացած, մեկուսի կյանք էին վարում թե խումբը և թր մանավանդ Նազարբեկյան ամուսինները. թերևս նրանց այդ կզգլիացումը, ազգային խմբական պատյանի մեջ պարփակված լինելը տեսնելով՝ ուսական գաղութի եմիգրանտները Նազարբեկյան ամուսիններին «царь, царица Армений» բնորոշ անուններով էին կնքել:

Այդ տեսակ մի տարրինակ ընկերութեան մեջ մնալը ինձ անհնարին էր. չկար եթիկա, չկար ընկերական փոխադարձ վստահութուն և հավատ, առանց վորոնց վոչ մի գործ, ևս առավել զաղափարական մի գործ, չէր կարող հարատև նորմալ կյանք ունենալ: Բացի դրանից մի քանի ամիսների ծանօթութունը նրանց հետ ինձ խորապես համոզեց, վոր խումբը բոլորովին անպատրաստ էր քաղաքական-հեղափոխական ասպարեզում գործելու. տիրում էր նրանց մեջ մտքերի կատարյալ քաոս. խմբի գրեթե բոլոր անդամները քաղաքական զարգացման տեսակետից՝ անճարակ, խեղճ ու կրակ գրութեան մեջ էին: Մեր «անվերջ վի-

ճարանությունները» մեջ մենք միմեանց ամենեկին չեինք հասկանում: Պարզ եր միայն մի բան. թեև խմբի այս կամ այն անդամը Տկաչևի կամ բազմաթիվ անարխիզմի ազդեցութեան տակ եր գտնվում, այնուամենայնիվ նկատելի եր պարզ ու վորոշ կերպով նրանց նացիոնալիստ լինելը: Այդ բանը խանազատն ել վկայում է այսօր, 40 տարուց հետո միայն...

Ամեն ինչ ծուռ ու թարս եին հասկանում: Յերեխայական խենթ ու խելառ քայլեր անելու ընդունակ՝ նրանք, կարծես, վորոնում եին մի առիթ ու դեպք ի կատար ածելու իրանց մտքում հզացած նման վորեև մի քայլ: Մի որ ել հավաքված Գ. Կաֆյանի սենյակում մտածում է խորհրդակցում եին այն մասին, թե ինչպես անել վերացնել մեջտեղից Պուսո հայոց պատերիարք Ազգյանին, տերրորի յենթարկել, սպանել նրան, որովհետև նա Սուլթանի Սալամըլլեի ժամանակ արտասանել եր հավատարմութեան և վորջուցնի սովորական մի ճառ: Այս միբուքավոր, տարրինակ յերեխաներից վճռել եի որ առաջ հեռանալ. և այդ որը շատ չուշացավ. յես փախա նրանցից, ինչպես պետք եր փախչել ժանտախտից:

Իմ խմբից ընդմիշտ հեռանալուն առիթը յեղավ հողվածը, վորի մերժման հանգամանքը մի առանձին հաճույքով առաջ է բերվում ամեն անգամ խանազատի «հուշերի» մեջ: Տեսնեք թե ինչ պարագաներում է տեղի ունեցել այդ «փոքրիկ վիրավորանքի» դեպքը, վորի պատճառով, խանազատի ասելով իբր թե յես հեռացել եմ խմբից:

Իմ հողվածը, վորի մեջ քնութեան եյին առնված և լուսաբանվում եին Հայաստանում հեղափոխական գործունեութեան մեթոդները, գործելակերպը, գրված եր սոցիալդեմոկրատական և վոչ անարխիստական-նացիոնալիստական ուղղութեամբ և վորգով:

Ոհանյանը բացակա եր, Կաֆյանը անարգված ու վշտացած փախել եր գնացել ժընեից Յյուրիի և ապա Լեիպցիգ: Տողվածիս ընթերցանութեան ժամանակ ներկա եին 4 հողի.— հողվածի հեղինակը, խանազատը և Նազարբեկյան ամուսինները: Վերջին յերեքը հողվածի գեմ արտահայտվեցին. առաջարկվեց փոփոխութեանների յենթարկել և նորից ներկայացնել: 1—2 որից հետո խանազատն ել փախավ ժընեից, գնաց Մոնպելիե, «մի քիչ՝ պարագելու», ինչպես ինքն եր ասում, վորովհետև ժընեիում «պարագելու» հնար չկար, խանազատը եին... Աննշան փոփոխու-

թյունների յենթարկեցի հողվածը. հազիվ մի շաբաթ անց՝ նա նորից կարգացվեց միայն Նազարբեկյանների ներկայութեամբ: Հողվածի մեջ արծարծված հարցերը սկզբունքային տարածայնութեաններ առաջ բերելով մեր մեջ յերկու ամուսինները այս անգամ արդեն բացարձակապես մերժեցին հողվածը:

Ինկատի ունենալով, վոր տարրինակ, աննորմալ, հիվանդոտ գրութեան եր ստեղծվել մեր մեջ ընդհանրապես, վոր տարածայնութեանները, անախորժ ընդհարումները, Նազարբեկյան ամուսինների դիկտատորութեանը, ընկերական տգեղ արարքները և այլն այլևս հնարավորութեան չեին տալիս այդ մարդկանց հետ աշխատելու վորեև ձևանալութեան մեջ, յես վերջնականապես վճռեցի հեռանալ խմբից. գրա առիթը յեղավ հողվածիս քրմահաճոքն մերժումը: Հետևյալ որը նամակ գրեցի Նազարբեկյան ամուսիններին, վորի մեջ հայտնում եի ընդ միշտ նրանց հետ իմ հարաբերութեանները և կապը խզելու մասին մեր անհամաձայնութեան պատճառով:

Այս է հաջ յեղելութեան իսկութեանը: Յես հեռացա խմբից վոչ թե «հողվածի մերժումից սաստիկ վիրավորված, խոտված» և կամ այդ «փոքրիկ վիրավորանքի» պատճառով, ինչպես խանազատն է դատարկում, այլ բոլորովին այլ կարգի լուրջ պատճառներով— սկզբունքային և թե ընկերական— բարոյական: Յեվ այս բանը դեռ այսօր ել, այն ժամանակից 40 տարի անցնելուց հետո՝ խանազատը չե հասկացել, ավելի ճիշտը իրան չհասկանալուն է տալիս և մատին փաթաթան անելով հողվածի մերժման դեպքը՝ պառավ տատի նման այս-այնտեղ նստում հեքիաթներ և պատմում: Յեվ յեթե խանազատը «մոռացել» է, յես նրան կհիշեցնեմ իմ խմբից հեռանալու տարեթիվն ու ամիսն անգամ. դա 1887 թվի յուրիս ամիսն եր: Այդ ամսի սկզբում տեղի ունեցավ իմ հողվածի առաջին ընթերցումը խանազատի ներկայութեամբ. իսկ դրանից հազիվ մի շաբաթ անց՝ յես հեռացա խմբից: «Հընչակ»-ի 1 համարը լույս տեսավ 1887 թ. նոյեմբեր ամիսին: Գուր, խանազատ, վոր մի ժամանակ «Յերկրի Չայն»-ում ամենայն համառութեամբ պնդում եիք թե յես հեռացա խմբից «Հընչակ»-ը լույս տեսնելու միայն նախընթաց որը, իսկ յես գրա հակառակ գրում եի թե մի քանի ամիս առաջ եի հեռացել— հաշվեցեք, հուլիսից մինչև նոյեմբեր ամիսը մի քանի ամիս անում է թե վոչ: «Հընչակ»-ի 1 համարում գեաեղվելիք վոչ մի հողվածի ընթերցում իմ ներկայութեամբ տեղի չե ունեցել. վեներակից տառերը ուշ ստա-

նալու, սարք ու կարգի դրելու, գրաշարի հոգսը քաշելու և հոգ-վածները գրելու դանդաղության պատճառներով թերթի 1 համա-րը լույս տեսավ առանձին վերջերը:

Անհրաժեշտ է այստեղ նկատել, վոր «Հայկական հարց»-ի շորշորներին ազատ չէ յեղել տողերիս գրողը մինչև 1884—5 թ.թ.: Բայց շուտով դրանից հետո՝ դեռ ևս Անգրկովկասում՝ իմ մեջ աշխատի բեկումն, հեղաշրջումն էր տեղի ունեցել, վոր այլևս Տաճկա-Հայաստանում գործելու ձգտում չեյի կարող ունենալ և վոչ էլ նպատակ: Յես չեմ հերքում, վոր 1886 թվի վերջերին և 1887 թվի սկզբներին, յերբ ժընեվում իմ ուսանողության ժամանակ յես արդեն հակվել էի դեպի սոցիալ-դեմոկրատիզմը, բացարձակապես դուրկ լինելի Տաճկա-Հայաստանում գործելու արա-մադրությունից, վորի առիթով հեքիաթային չափազանցության մեջ ընկնելով գրում է Սանազատը թե «մյուս ընկերներից պա-կաս չեր յերազում Հայաստան գնալու և այնտեղ գործելու մա-սին»: Յես կարող եմ հավատացնել Սանազատին, վոր, առաջին՝ յեթե անգամ գնայի Հայաստան գործելու, իմ գործունեությունը այնտեղ կարտահայտվեր վոչ թե ազգայնական-ավանտիւրիստա-կան-տեղըրիստական և ասպատակային-հայրուկային մեթոդներով, ինչպիսի գործունեություն Սանազատներին, Նազարբեկյաների գլխավորությամբ և ղեկավարությամբ կիրառել է միշտ այնտեղ Հնչակյան կուսակցությունը, այլ հնարավորության սահմաններում սոցիալ-դեմոկրատական ուղղությամբ և մեթոդներով և յերկ-րորդ՝ յեթե ինձ ասեյին գնալ դրախտ և վոչ թե Հայաս-տան, յես ձեզ հետ, Սանազատ, գնացողը չեի. գործակցությունը և աշխատակցությունը իմբի անդամներին հետ նույն իսկ դրախ-տում կհամարելի հոգեբանորեն ինձ համար անհնարին:

Հեքիաթ յերորդ: Սանազատին ամոթի զգացմունքը չէ ար-գելում գրելու հետեյալ տողերը. «կուսակցության ծրագիրը մշա-կելու համար, ասում է նա, մի հանձնախումբ ընտրվից մեր մի-ջից. նրա անդամներն էյին. որ. Մարո Վարդանյան, Ավ. Նազար-բեկ և Գ. Ղարաջյան»: «Այդ հանձնախումբի կազմած ծրագիրը հաստատվելուց և վավերացվելուց հետո՝ մեր հեղափոխական ըն-կերությունն արդեն կազմված էր համարվում»: «Այդ ծրագիրը հետո Հնչակյան կուսակցության ծրագիրը դարձավ»: Յեզ այս գալիմաթիան նա, ինչպես անցյալում, այնպես էլ այսօր կրկնում է դաշնակցական «Հայրենիք» ամսագրի հջերում: Նա գրչի մի շարժումով գրել է անցյալում այսպիսի մի տող ևս. «մենք (այ-

սինքն խմբի անդամները. Գ. Ղ.) ամիսներ շարունակ կուսակ-ցության ծրագիր էյինք մշակում»*):

Պետք է յենթագրել, վոր յեթե նման մի հանձնախումբ գոյություն է ունեցել, վորին վորպես անդամ ինձ մասնակից է դարձնում Սանազատը, նա ընտրված պետք է լիներ անշուշտ 1886 թ. վերջերին կամ 1887 թ. առաջին կիսամյակի ընթացքում, վորովհետև այս վերջին թվականի ամառը (հուլիսին) արդեն ը-լորովին հեռացած էյի իմբից: Այդ ժամանակաշրջանում յես յեր-բեք չեմ տեսել «խմբի անդամներին ամիսներ շարունակ կուսակ-ցության ծրագիր մեակելիս», յերբեք չեմ լսել ծրագիր մեակելու նախ-նախաբերի բնութարան կամ գոյության մասին: Յես չգիտեմ. գուցե Սանազատը յերազումն է տեսել ինձ հանձնախումբի անդամ ընտ-րելիս և ծրագիր մշակելուն մասնակցելիս. դա շատ հավանական է վորպես սոմանրուլիզմին հատուկ մի յերևույթ. անհավանա-կան չէ նույնպես, վոր Նազարբեկյան ամուսինները այդ ժամա-նակ և թե հետագայում իրանց կարիքներում առանձնացած ինք-նազուլիս այդպիսի ծրագիրներ մշակել-կազմելու ջանքեր են թա-փել, վորոնց իմ մասնակցության կարևորությունը Սանազատի կամ թերևս իմբի դարձյալ մի ուրիշ անդամի յերևակայության մեջ արտահայտվել է վորպես ցանկություն, բայց յես բացա-րանապես հայտնում եմ հրապարակով, վոր հնչակյան ծրագիր մեա-կելու հանձնախումբի անդամ չեմ յեղել յերբեք. յերբեք մասնակցու-թյուն չեմ ունեցել Հնչակյան կուսակցության ծրագիր մեակել-կազ-մելու աշխատանքներին: Տեսեք թե, ըստ Սանազատի, ծրագիրը ինչպես է կազմվել և ընդունվել կուսակցության կողմից: Խմբի 3 անդամները ծրագիրը մշակում, պատրաստում են, իսկ իմբի ֆեացած 2 անդամները հաստատում և վավերացնում են, վորից յետո այդ ծրագիրը դառնում է կուսակցության ծրագիր: Կարելի է յերևակայել ավելի մանկամիտ հասկացողություն կուսակցու-թյան ծրագրի մշակման, ընդունելության, վավերացման հարցե-րի վերաբերյալ... Հայագրի տիրացու հեղափոխականների համար, սակայն, աներևակայելի յերևակայելի, անընդունելի ընդունե-լի է համարվել միշտ: Վերագրել ինձ մի դեր, վոր այն ժամանակ հանդգնություն կհամարելի ինձ համար կատարելու, դա չտեսն-ված և չլսված մի վարմունք է: Չնայելով այն բանին, վոր յես իմբից հեռանալու մոմենտին վորտաղի կերպով արդեն հակվել

*) Տես «Յերկրի Չայն» № 26, 1907 թ.

եյի դեպի մարքսիստական իդեոլոգիան և սոցիալդեմոկրատիզմը, այնուամենայնիվ իմ ուսանողության առաջին ամիսներին իմ կարողությունները դեռ ևս այնքան համեստ էին, հեղափոխական-քաղաքական հոսանքների իդեոլոգիայի հետ դեռ ևս այնքան ծանոթ չեի, վոր ինձ թույլ տայի համաձայնվելու մի հեղափոխական կուսակցության ծրագիրը մշակելու հանձնախմբի անդամ լինելու և նման լուրջ աշխատանքներին մասնակցելու: Այսպիսի պատասխանատու, լուրջ քայլեր թույլ են տվել հաճախ մեր հոսնոտ տիրացու հեղափոխականները, բայց ուրիշ վրա բարդել նույն անթույլատրելի արարքը, ինչպես Սանազատը թույլ է տալիս իմ վերաբերմամբ, դա առնվազն անազնիվ մի վարմունք է, չեթե ավելին չասենք:

«Մի բան, սակայն, տարրինակ է, գրում է նա, մի յերկու անգամ առիթ եմ ունեցել Հնչակյան կուսակցության հիմնվելու այս պատմությունն անել և ամեն անգամ ել Փ. Ղարաջյանը իր սրբազան պարտականությունն է համարել՝ բուռն կերպով բողոքելու պատմածներիս դեմ, ասելով թե ինքը յերբեք չէ յեղած Հնչակյան կուսակցության հիմնադիրներից մեկը: Յեթե նա իմ պատմածների մեջ ուզողում մտցներ, ասելով թե վերջում մեջ բերածս ծրագիրը մշակելու ժամանակ, մեր ընկերությունը վոչ մի անուն չուներ և դեռ գոյություն չուներ Հնչակյան կուսակցություն, յես իհարկե վոչինչ չեի ունենա առարկելու: Իբայց յերբ նա ուրանում և հերքում է մեզ հետ ընկեր լինելը, մեր հեղափոխական ընկերությունը կազմելու ժամանակ ծրագրի մշակության գործում մասնակցելը և «Հնչակ»-ի առաջին թիվի համար հոդված գրելն անգամ, այդ արդեն յես չեմ կարողանում հասկանալ ու ներել»:

Այն, Սանազատ, այժմ ել, ինչպես և անցյալում, յես իմ «սրբազան պարտականությունն» եմ համարում բուռն կերպով բողոքելու ձեր անբարեխղճության, ձեր ստախոսությունների, դիտակցաբար փաստերի ձեր խարդախման դեմ, վորոնց ձեր «սրբազան պարտականությունն» էք համարել ամեն անգամ դիմելու: Ձեր այդ լեզուն, ձեր այդ ձևերը, ձեր սխիբրիլին նոր չեն ինձ համար. 40 տարից ի վեր նրանք ինձ շատ լավ ծանոթ են: Դուք գրում էիք մի ժամանակ («Յերկրի Ձայն», 1907 թ.), վոր դուք մինչև իմ խմբից բաժանվելը «շատ մոտ էք յեղել ինձ հետ և 20 տարի անցնելուց յետո ինձանից միայն նոր ելք լսում իմ խմբից հեռանալու դեպքը սկզբունքային տարաձայնության պատճառով»:

Դուք հաշիվ չեիք տալիս թե ինչ եր կատարվում մեր մեջ. չեիք տեսնում մեր «անվերջ վիճաբանությունների, խոսակցությունների» և տարաձայնությունների ներքին խմաստը, եությունը: Վերջին ամիսներին տեսնելով ձեր վոչ անկեղծ լինելը, ձեր յերկղիմությունը, յես շատ զույլ և գապված եյի ինձ պահում իմ խոսակցությունների ժամանակ թե ձեզ հետ և թե միուսների հետ: Դուք փախաք Նազարբեկյաններից, գնացիք Մոնպելիե (ձեզանից առաջ Կաֆյանն եր արդեն գլուխը ռազ արել նրանցից): Խմբից բաժանվելուց հետո, յես կարծում եի թե դուք կշարունակեք պաշտպանել ձեր կարծիքը և դիրքը Նազարբեկյանների վերաբերմամբ. բայց յերբ տեսա, վոր դուք անարգաբար փոխեցիք ձեր ֆրոնտը, յես ամենայն հավատ կորցնելով դեպի ձեզ՝ անբնական բան կլինեք իմ կողմից նամակագրությամբ իմ սիրտը բանալ ձեր առաջ, գրել ձեզ մանրամասնաբար մերժված հոդվածիս շուրջը տեղի ունեցած մեր խոսակցությունների և տարաձայնությունների մասին. թեև սկզբում, վորքան յես յիշում եմ, այդ տարաձայնությունների մասին համառոտակի հաղորդեցի ձեզ նամակով: Յես չեմ կարող հերքել անհերքելին, այսինքն ձեր խմբի հետ 9—10 ամիս կապ ու հարաբերություն ունենալու իմ դժբախտությունը. բայց ասել թե յես «նախկին հնչակյան» եմ, յեղել եմ «Հնչակյան կուսակցության հիմնադիր», «կուսակցության ծրագիրը մշակող հանձնախմբի անդամ», «Հնչակ»-ի աշխատակից», դա ձեզ համար շատ հեշտ է, ոգտակար և միանգամայն բնական ձեր հեքիաթային խառնվածքին:

Դուք նմանում եք այն արգահատելի հնչակյանին, վորը, մի մասնավոր խոսակցության ժամանակ նրա հարցին թե յես հնչակյան եմ յեղել թե վոչ— իմ բացասական պատասխանից յետո՝ բացականչեց. «Ինչպես, մի՞թե դուք հնչակյան, Հնչակյան կուսակցության հիմնադիր չեք յեղել, քանի վոր յես ձեզ տեսել եմ Հնչակուսակցության հիմնադիրների հետ միասին նկարված խմբական նկարում»: «Ուրեմն ձեր կարծիքով, պատասխանում եմ նրան, մի խեղճ ու կրակ, աղքատ ոուս ուսանող Կաղիցկի անունով, վորը հաճախում եր Նազարբեկյան ամուսիններին, նույնպես հնչակյան, հնչակյան կուսակցության հիմնադիր և յեղել, վորովհետև նա ել մի անգամ ժընեվի խմբի բոլոր անդամների հետ միասին նկարվեց»:

Դուք, Սանազատ, թույլ եք տալիս ձեզ նույնպես գրել, վոր երբ թե «յես հերքում և ուրախանում եմ ձեր հարցին թիվի հա-

85-17171



4317 91

մար հողված գրեւն անգամ»: Ի՞նչ անուն տալ ձեզ դրանից յետո, քանի վոր այդ հողվածի պատմութիւնը յես մանրամաս տվել եմ մեր բանավեճի ժամանակ «Յերկրի Չայն»-ի 1908 թ. հունվարի առաջին համարներում, վորը դուք մտաւայտ չեիք կարող լինել: Չեր այդ վարմունքի հարկ ու պատշաժ ածականը թողնում եմ տալ ընթերցողին:

Նույն «Յերկրի Չայն»-ի 26 համարում (1907 թ.) Սանադատը ունի գրած և այսպիսի տողեր. «Ինչո՞ւ ե նա (այսինքն յես. Գ. Ղ.) այժմ մի մեծ թյուրիմացութիւն համարում այն, վոր ընկերները նրան «նախկին հնչակյան» են համարում: Իհարկե «Հնչակը» լույս տեսնելուց առաջ մեր խմբի անդամներից վոչ վոք չեր կարող «հնչակյան» անվանվել, բայց այդ բոլորովին չեր հերքում այն իրողութիւնը, վոր մենք բոլորս մեզ հետ և Ղա-բաջը նույն սկզբունքները, նույն հավատալիքներն ու նույն աշխարհայացքն ունենինք այն ժամանակ, ինչ վոր վերջը արծարծվեց «Հնչակ»-ում»:

Այս բոլորը դատարկ բարբաջանքներ են: Այն ժամանակ խումբը տեղերում եր մտքերի կատարյալ քառսի մեջ. նա անսկզբունք եր և վորպես քաղաքականապես անգրագետ մարդիկ՝ գուրկ եին վորոշ ուղղութիւնից, վորոշ աշխարհայացքից. նրանց հավատալիքները բոլոր ազգայնականներին և հետագայում Դաշնակցութիւնի հավատալիքներն եին: Այդ ժամանակ, ինչպես վերև ասացի, իմ թեքումը արտահայտվում եր մարքսիզմի և սոցիալ-գեմոկրատիզմի ուղղութիւնը, վորը կարելի ե գոհումենտներով հաստատել. հետևապես «ինչ վոր վերջը արծարծվել ե «Հնչակ»-ում» ընդհանուր վոչինչ չե կարող դուսենալ այն ժամանակ կազմած իմ աշխարհայացքի և ուղղութիւնի հետ:

Այսպես, ուրեմն, խմբի հետ միառժամանակ հարաբերութիւն և կապ պահպանած լինելը չե նշանակում հնչակյան լինել կամ կուսակցութիւնի հիմնադիր լինել: Այդ շրջանում դուես «Հնչակիզմ» վորպես քաղաքական-կուսակցական ուղղութիւն, իդեոլոգիա, յեթե կարելի ե ուղղութիւն, իդեոլոգիա համարել այն, գոյութիւն չունենր:

1887 թվականի հուլիսին խմբից ընդմիջա բաժանվելուց հետո յես նրա անդամներից եմ վոչ մեկի հետ վոչ մի գործ այնուհետեւ չեմ ունեցել, վոչ մի տղ «Հնչակ» քերքում նրա լույս տեսնելուց հետո կամ Հնչ. կուսակցութեան մի այլ քերքում յերբեք չեմ գրել, յերբեք վոչ մի կազմակերպչական եմ գաղափարական կապ չեմ

ունեցել Հնչ. կուսակցութեան հետ, վոչ մի հնչակյան կուսակցական աշխատանք եմ գործ հնչակյան այս կամ այն կազմակերպութեան կամ հնչակյան անդամների հետ չեմ ունեցել, յերբեք չեմ դավանել հնչակյան «սոցիալիստական» աշխարհայեցողութիւնը, այլա ուրեմն այս բոլորից հետո, վորքան արդարացի և հիմնավոր կարելի ե համարել ինձ նման մեկին հնչակյան և հնչակյան կուսակցութեան հիմնադիր հայտարարել, ինչպես այդ անում ե և կրկնում ե համառութեամբ Սանադատը, ունենալով, կարծես, ինչ վոր մի ճշգրտում, մի յետին միաք միտտիֆիկացայի սրբեկտ դարձնելու ինձ:

Սակայն Սանադատի հեքիաթաշարքը դու ես սրանով չե վերջանում. это еще цветочки, ягодки впереди.

Հեքիաթ չորտոր: Այս հեքիաթը դուրս ե այն զլխավոր հեքիաթների շարքից, վորոնց պարզաբանումը կազմում ե իմ ներկա հողված ծիսնյութը: Բայց յեթե այս բացառիկ հեքիաթի հետ թույլ եմ տալիս ինձ մի քանի խոսքով ծանոթացնելու ընթերցողին՝ այդ միայն նրա համար, վոր ցույց տալ թե ինչպիսի հայացք ու կարծիք ունի հայազգի «հեղափոխական» Սանադատը մարդկանց հեղափոխական լինելու մասին, վորն և մարդկանց հեղափոխականութեան նրա չափանիշը: Մի կողմ թողնելով այն սխալ տեղեկութիւնները, վոր նա տալիս ե աշակերտական միութիւնների և նրանց «Մուսուխիկ» և «Հայրենասերի Չայն» թերթերի մասին, յես առաջ կրերեմ վորպես նմուշ նրա «հայ հեղափոխականի հուշերից» այն Փարուլան, վոր վերաբերում ե Յերևանի «հայ առաջին հեղափոխական ընկերութեան», ինչպես անվանում ե նրան մեր հնչակյան «մեմուարիստը»:

Սանադատի ասելով «Բերլինի դաշնագրութեան հրատարակումից (1878 թ.) հազիվ մի-յերկու տարի անցած, Յերևանում գաղանի մի հայկական ընկերութիւն ե կազմակերպվում, վորն իրան նպատակ ե դնում ազատամբական շարժումներ առաջացնել թյուրքահայաստանում»: Ովքեր են յեղել այդ «հեղափոխական ընկերութեան» «հեղափոխական» անդամները. բժ. Լևոն Տիգրանյանը, փաստաբաններ՝ Վասիլ Յեղիազարյանը, Ռուբեն Զաւարյանը, Տրդատ Վարդանյանը և «Նադեժդա» գրասենյակի կառավարիչ Թովմաս Մհերյանը: Նրանց լավ ճանաչող հին յերևանցիները կարող եին միայն կուշտ ծիծաղել, յեթե իմանային, վոր այդ պարոնները հայ հեղափոխականների ցուցակն են ընկել և նրանց ցուցակագրողն և «հայ հեղափոխական» Սանադատը: Տողերիս գրողը շատ լավ ե ճանաչել հիշյալ անձերից մանավանդ առաջին-

ներին. պետք է ասել, վոր Սանազատի «Տեղափոխականները» զոչ այլ ինչ եին, բայց միայն հայկական «զուբրեր». նրանք հեղափոխութեան հետ, հեղափոխական շարժումները հետ վոչ մի առնչութիւն չեն ունեցել և չեին կարող ունենալ: Վասիլ (Դավիդովիչ) Յեղիազարյանը կալվածատեր եր, ավատական կալվածատերի հակումներով. բժ. Լևոն Տիգրանյանը—Սանասարյանի ժառանգը, շատ հարուստ, բուրժուազական փարթամ կյանք վայելող մի մարդ եր. Ռուբեն (Մինեիչ) Հասան-Չալալյանը նույնպէս չափավոր լիբերալ մի բուրժուա ինտելիգենտ եր, վորը շատ հոռու և չեղել հեղափոխական լինելուց, հեղափոխական վորեւ գործից: Դրանք են գլխավորները, Սանազատի «առաջին հեղափոխական ընկերութեան» ղեկավարները, լիբերները: Սանազատին հայտնի չե, ունեցել և արդոք այդ ընկերութեանը մի վորեւ հատուկ անուն կամ մշակած ծրագիր. բայց նա «գիտե, վոր այդ ընկերութեանը իրան նպատակ է գրել դրամ հավաքել, ղենք գնել և թշուրքահայաստան ուղարկել, իսկ մինչ այդ նա յերկու մարդ եր ուղարկել թշուրքիայի հայկական նահանգները շրջելու, ժողովրդի տրամադրութեանն իմանալու և մի քանի այլ պայմաններ ուսումնասիրելու»: Ահա այդ «հեղափոխական ընկերութեան» գործունեութեանը թշուրքահայաստանում: Նրանց թշուրքահայաստան ուղարկված անձնավորութեաններն են յեղել մի վարդապետ (Թավաքալյան) և մի տերտեր—Դարալաբազցի Տեր-Գրիգորը, վորը, Սանազատի ասելով, «իւր քաջութեան և քաջութեան փորութեան համար հայտնի եր «Իիժ» Տեր-Գրիգոր անունով»: Մրանք անցնելով սահմանից՝ սկսում են «մոռացած իրանց առաքելութեանը» արկածախնդրական արարքների ղիմել. «ապստամբական քարոզներ խոսելով յեկեղեցիներում» իբր թե հուզել են ժողովուրդը: Սուլթանի կասապարութեան հետապնդումից հարկադրված՝ նրանք փախչում են. անցնելով սահմանից հասնում են Յերևան և պահվում են Սաչատուր Մելիքյանի տանը», իսկ ուր է այդ Սաչատուր Մելիքյանը. «դա, գրում է Սանազատը, Յերևանի այն հին քաջերից եր, վորոնք յերիտասարդ հասակում թե ավազակութեամբ և թե մաքսանենգութեամբ եին պարապում Տաճկաստանի և Պարսկաստանի սահմաններում: Նա, վորը Յերևանում հայտնի եր Յեզնակենց Սեչո անունով պատմութեանս ժամանակ արդեն տարիքն առած մի շատ բարեպաշտ մարդ եր, քաջ ծանոթ իւր ջերմ ազգասիրութեամբ»:

Յերևանի այդ «առաջին հեղափոխական ընկերութեան»

կյանքը յերկար չի տևում: Նրա անդամները շուտով ձերբակալվում են և աքսորվում: Ընկերութեան այդ պրովալը տեղի յե ունենում նրա անդամներից մեկի կատարած «հեղափոխական» մի ակտի հետևանքով: Թոմաս Մներյանի գիմնադրայի աշակերտ յեղբորը գիմնադրայի հայտոյաց և ուսուցիչի կատար ղիրեկտոր Բրաժնիկովը անվանում է «արմյաշկա». աշակերտը հայտնում է այդ մասին իւր ավագ յեղբայր «ազգասեր» Թոմաս Մներյանին: Սա հանդիպելով Բրաժնիկովին բուլվարում՝ ապտակ է տալիս նրան: Այդ «տերտորը» կատարվելուց հետո Մներյանի բնակարանը խուզարկում են. նրա թղթերի մեջ գտնում են ինչ վոր կասկած հարուցանող հետքեր, հիշյալ ընկերութեան անդամների անունները և այլն, վորից հետո ձերբակալում են վոչ միայն Մներյանին, այլ և խմբի մյուս անդամներին: Հետո նրանց աքսորում են Ռուսաստանի գանազան քաղաքները:

Նրանց ձերբակալութեան և աքսորի փաստը կարելի չե, իհարկե, հերքել: Բայց այդ «զուբրերը» հեղափոխականներ են արդեոք, կարելի է նրանց ընկերութեանը հեղափոխական կազմակերպութեան անվանել և համարել, ահա այդ է հարցը: Սա նազատը այստեղ էլ տվել է իւր «հուշերին» հեքիաթային բնավորութեան: Հերքել թե նրանք կարող եին 80-ական թվականների հայ իրականութեան շովինիստական, ազգասիրական մըթնոլորտում «դրամ հավաքել, մարդ ուղարկել» այն էլ վարդապետ ու տերտեր թշուրքահայ նահանգները «շրջելու, ժողովրդի տրամադրութեանը և այլ պայմանները ուսումնասիրելու» նույնպէս կարելի չե: Շատ հավանական է, վոր այդպէս էլ յեղել է. բայց դա նրանց «հեղափոխական» լինելն է արդոք նշանակում: Վոչ վոր չե կարող բացատրել, վոր շահագործող-կալվածատեր, բուրժուա դասակարգերից կարող եյին հեղափոխական տարրեր հրապարակ գալ հեղափոխական-քաղաքական գործունեութեան ասպարեզ, ինչպէս այդ ցույց է տալիս ազգերի հեղափոխութեան պատմութեանը: Բայց Սանազատի հիշված մարդիկ, վորոնք արխիբուրժուաներ եին, հայկական զուբրեր բառիս բուն նշանակութեամբ, այնպիսիներից չեին, վոր իրանց հասարակական գործունեութեամբ Յերևանի շրջանում, ընդունակ լինեին, վորեւ տրամադրութեան և ձգտում ունենային հեղափոխական մի քայլ մի ակտ կատարելու:

Ձերբակալութեանը, բանտ ու աքսորը չեն ապացուցանում անպատճառ տուժողի հեղափոխական լինելը: Ցարական գաղտնի

վաստիկանությունը, սխրանկան հազարավոր, տասնյակ հազարավոր վոչ հեղափոխականներին, անմեղ մարդկանց և բանտ ու աքսորի դատապարտել միայն հասարակ կասկածի հիման վրանրանց, այդ պատճառով, հեղափոխական համարել կարելի չէ, թեև նրանց մեջ յեղել են այնպիսիները, վորոնց քաղաքական հալածանքը, ճնշումները հեղափոխական են դարձրել, հեղափոխականացրել են, իսկ վոմանց ևլ ունակցիայի ջերմ կողմնակից դարձրել: Իսկ Վ. Յեղիազարյանը, Լ. Տիգրանյանը, Ջալալյանը և այլն աքսորից յետո ֆրանսիական plus royaliste que le roi խոսքի նմանությամբ արտայայտվելով՝ դարձան ավելի բուրժուաքան բուրժուան:

80-ական թվականներին տեղից վերկացող ամեն մի կասկածելի անձնավորություն, ամեն մի ավանտյուրիստ իրան «ազգասեր», «ջերմ ազգասեր» եր հայտարարում: Յեւ այդ «ազգասիրության» աստուծի տակ նրանք հաճախ ուրիշ նպատակ չունենին, բայց միայն քաղել աշխատավոր ժողովրդի մտերքը իրանց գայլի ժանիքներով: Սանազատի «հեղափոխական ազգասերները» մասին ևս յես ուրիշ կարծիքի չեմ: Հենց իրեն Սանազատի վկայությամբ «Վ. Յեղիազարյանը կալվածատեր եր», «Սաչատուր Մելիքյանը, վորի տանը Յերևանում պահվում են «Գիծ» Տեր-Գրիգորը և վարդապետ Թավաքալյանը, այն հին քաջերից եր, վորոնք յերիտասարդ հասակում թե ավազակությամբ և թե մաքսանենգությամբ եին պարապում: Իսկ դարալագյազցի «Գիծ» Տեր-Գրիգորը, վորին դպրոցական աշակերտ-աշակերտուհիները փողոցում յետևից «տեր-կինտո» եյին անվանում, շատ վատ վարկի տեր եր ճանաչված Յերևանում: Ահա այսպիսի կասկածելի մարդիկ են Սանազատի «հեղափոխականները»: Նրանց «հեղափոխական գործերի և սխրագործությունների» մասին հեքիաթանման պատմություններ և հյուսում Սանազատը:

Ի՞նչ պետք է շահի հայ քաղաքական պատմությունը նման հեքիաթներից: Վոչինչ և վոչինչ. բացի միայն այն, վոր արկածախնդրական-հեղափոխական մտայնության նմուշներին, վորոնցով այնքան հարուստ է մեր հեղափոխական շարժումների պատմությունը, ավելանում է դարձյալ մի նոր, անորինակ նմուշ ևս: Արդեն ժամանակ է վերջ տալ այս ձևի հեքիաթաբանության. պետք է միանգամ ընդմիջտ գտակ անդրկովկասյան ուսուսնայ հեղափոխական պատմությունը տաճկահայ, մեծ մասամբ, արկածախնդրական-հեղափոխական պատմությունից, վորը ամենևին

կող չունի մեր յերկրի հեղափոխական շարժումների պատմության հետ: Հնչակյան և դաշնակցական կուսակցությունների quasi — հեղափոխական գործունեությունը մեր յերկրում կարող է մեր յերկրի հեղափոխության պատմագիրներին զբաղեցնել այն չավով, վոր չպիով նրանք ունակցիոն դեր են խաղացել, արգելադիթ են հանդիսացել մեր աշխատավոր մասսաների հեղափոխական քաղաքական նորմալ զարգացման, մթնացրել են նրանց դասակարգային պայքար մղելու քաղաքական գիտակցությունը:

Հեքիաթ հիկեբերոդ: Սա արդեն Սանազատի հեքիաթների գլուխ գործոցն է: Նա գրում է: «Մեր ընտրած հանձնախմբի կազմած ծրագիրը մի խառնուրդ եր յերկու ուղղությունների (հարավայլցիտայան ել մարտիգլի), վարոցից հարողայլցիտայանը գերզգանցում եր մարտիգլին: Հետագայում մեզ՝ բոյոս ընկերներս ել հետզհետե դեպի մարտիգլի թեկվեցին ել մեր ամբողջ ախարհահայացով դարձան մարտիգլիներ. իսկ գործելիքսով, իրակցուսյան մեջ, մարտիգլի պահանջներին համապատասխանող վոչ մի հող չգտնելով, մեացին հարողայլցիներ: Այդ դեռ բավական չէ. իբրեւ 80-ական թվականներ հայ իրականության հարազատ զավակներ հիմնում մեզ ամենամատուր ազգայնականներ էին»... Հետո... «Մարտիգլի մրջագային վոգուն յով ծանոթ լինելով հանդերձ. մեզ մեր գործունեության ծրագրով պարվակվել էին մեր ազգային պայանի մեջ» (Ընդգծումը մերն է. Գ. Ղ.):

Յես գիտությամբ առաջ բերեցի այս յերկար քաղվածքները ցույց տալու համար այն կեղծարար մեթոդը, հրեշավոր խեղագությունը, վորոնց զենք է դարձրել իրան համար Սանազատը պատմական հարցերը շոշափելիս: Այդ նմուշները մեկը մյուսից ավելի փայլուն ապացույցներ են նրանց հեղինակի մտքերի կատարյալ հակասության, «հեղափոխական» մտածողության կատարյալ խեղճության: Կարելի՞ է մի բոպե ընդունել վոր մեկը կարող է լինել «ամենամաքուր ազգայնական» և միևնույն ժամանակ գործելակերպով «հարողայլցի» և իր «ամբողջ աշխարհարհայացքով մարքսիստ»: Յեթե Սանազատը կարծում է թե «հետագայում խմբի բոլոր անդամները դարձան իրանց ամբողջ աշխարհայացքով մարքսիստներ», նա չարաչար սխալվում է: Հնչակյան կուսակցության հիմնադիրները իրանց ամբողջ գործունեության ընթացքում յերբեք մարքսիստներ չեն յեղել և չեին կարող լինել քանի վոր նրանց գործունեությունը, գործելակերպը, քաղաքական-հեղափոխական ուղղությունը ընդհանուր

վոչ մի կապ չեն ունեցել մարքսիզմի հետ: Սանազատը ասում է այդ միայն ընթերցողների աչքին թող փչելու համար և արդարացնելու Հնչակյան կուսակցութեան հիմնադիրների և լիդերների ազգայնական գործունեությունը անցյալում: Սմբի անդամների հետ իմ ծանոթութեան շրջանում, նրանք վոչ թե մարքսիզմի միջազգային վոգուն լավ ծանոթ էին, այլ մարքսիզմի հոտն անգամ չեին առել ամենևին չեին ըմբռնել նույն իսկ մարքսիզմի այբուբենը, չնայելով այն բանին, վոր խմբի անդամներից մեկը կամ մյուսը պատահական կերպով գուցե և կարդացած լիներ «Կոմունիստական Մանիֆեստը» կամ մարքսիստական մի այլ բրոշյուր:

Յես ասացի, վոր այդ ժամանակ նրանք այս կոմ այն ուսանարիստի, ուսու կասկածելի հեղափոխականի ազդեցություն տակ էին գտնվում, ավելի հակված դեպի այդ ժամանակ տիրող նաբոգովոյան հոսանքը, վորի մասին յես գրել եմ «Յերկիր Չայն», թերթում սրանից 20 տարի առաջ:

Բայց նրանք այդ ուղղություն մեջ էլ ամեն ինչ ծուռ էին հասկանում. նրանց միջուկը «ամենագուտ ազգայնականությունը» եր, չնայելով վոր իրանց արտաքինը, կեղևը նրանք ծածկում էին սոցիալիստական, անարխիստական ֆրազներով: Միայն այսոր—40 տարուց հետո՝ Սանազատը խելքի է յեկել և գիտակցել յերբ նա վերջապես խոստովանվում է թե «իրանք հիմքում ամենամաքուր ազգայնականներ են յեղել»: Բայց նա 20 տարի առաջ «Յերկիր Չայն» թերթում ուրիշ բաներ եր փչում: «Մի ամբողջ տարի մենք բոլորս էլ մի ուժեղ կուսակցություն հիմնելու մասին էինք մտածում ու անվերջ խորհրդակցում», վոր խումբը «հիմնադիր եր հանդիսանում մի հեղափոխական-սոցիալիստական կուսակցության» (ընդգծումը մերն է. Գ. Ղ.):

Պետք է, յիրավի, շատ ազոտ գաղափար ունենալ սոցիալիզմի, սոցիալիստական լինելու մասին Հնչակյան կուսակցությունը սոցիալիստական ճանաչելու և հայտարարելու համար: Ո՞վ է այն սոցիալիստը և կոմունիստը, վոր համարե այսոր Հնչ. կուսակցությունը սոցիալիստական: Այստեղ դարձյալ նույն հարցն է առաջ գալիս թե ինչպես կարող եր խումբը «հիմքում ամենամաքուր ազգայնական» լինել և միևնույն ժամանակ «սոցիալիստական», «մարքսիստական»:

* Տես յերշալ թերթի № 26, 1907 թ.

Այսորվա հայ բանվորը, վորը շատ թե քիչ անցել է քաղաքական գրագիտություն՝ կարող է միայն կուշտ ծիծաղել մեր ազգային «հեղափոխական» տերացունների նման կարծիքների վրա:

Զարմանալին այն է, վոր խմբի անդամների «հիմքում ամենամաքուր ազգայնականներ» լինելը Սանազատը արդարացնում է նրանց «վորպես 80-ական թվականների հայ իրականության հարազատ զավակներ» լինելով. դուրս է գալիս, վոր այդ ժամանակ անխտիր բոլոր հայ գործիչները պետք է անպատճառ ազգայնականներ լինեյին: Նույն իրավունքով կարելի է ասել, վոր խմբի անդամները «իրրև 80-ական թվականների հայ իրականության հարազատ զավակներ», բացի ազգայնականներ լինելուց՝ կարող էին և պետք է լինեին նաև տերացուններ, վորովհետև 80-ական թվականների հայ իրականության մեջ տիրող հոսանքներից եր նաև կղերականությունը, կղերական ուղղությունը: Սեղճ հայ «հեղափոխական», վորի նմանների ձեռքումն է յեղել մի քանի տասնյակ տարիներ շարունակ մի ամբողջ ժողովրդի բազմի քաղաքական դեկը Տաճկաստանում:...

Այն, ինչ վոր գրում եմ Հնչակյան կուսակցության մասին, դա միայն իմ անձնական կարծիքը չէ, այլ մեր հայ սոցիալիստական ինտելիգենցիայի հավաքական կարծիքը: Ռ. Ս. Գ. Բ. Կուսակցության բոլշևիկ թե մենշևիկ — հայ անդամները իմ կարծիքին համանման կարծիք են ունեցել միշտ հնչակյանների մասին: Կոմունյան, Շահումեան, Զուբարյան, Յերզնկյան, Ազատյան, Կասյան, Ավթարեգյան, Սանոյան, Սումարյան, Դեղուշկա, Բանվորյան և այլք, վորոնցից մի քանիսը նախկին հնչակյան են յեղել, միշտ համարել են Հնչակյան կուսակցությունը վորպես մի նացիոնալիստական, մանր-բուրժուազական կուսակցություն, վորի դեմ անհրաժեշտ է համարվել նույն պայքարը մղել, ինչ վոր Դաշնակցության դեմ:

Յես ամենևին նպատակ չունեմ ներկայումս պատմական մի ուսումնասիրություն գրել Հնչակյան կուսակցության մասին. դա կպահանջեր ավելի մեծ աշխատանք, հիմնված բազմաթիվ փաստաթղթերի և տվյալների վրա: Այնուամենայնիվ յես կփորձեմ առաջ բերելու այստեղ ուրիշների կարծիքներն ու դիտողությունները Հնչակյան կուսակցության մասին՝ նրա ինչ լինելու հարցը ավելի պարզելու համար:

Ս. Կասյանը գրում է. «Յերբ կապիտալիզմի զարգացումը կովկասում թևակոխում եր իր հասունության ժամանակաշրջանը

և զբա հետ միասին սովորացած հայ բանվորութեան առաջավոր շարքերն այլևս գիտակցում էին «Հնչակ»-ի և «Դրոշակ»-ի ազգայնական-հաղափական միտումներն ու կեյծ սոցիալիստական բարաջանները^{*)}, նրանք միջոցներ էին վորոնում յուրացնել բանվորական «ավետարանը» (խոսքը «Կոմմունիստական Մանիֆեստի մասին և. Գ. Ղ.»^{**) :}

Գ. Անանունը, վորը տարիներով յեղել է Դաշնակցական և Հնչակյան կուսակցութեաններ շարքերում, նրանց բովից անցել է և մեր մեջ ճանաչվել է վորպես աջակողմյան, շեյքեմանական տիպի սոցիալ դեմոկրատ, գրում է. «Հնչակյանները հպարտանում են, թե իրանց ծագման որից (1887) մարքսիստներ են: Հայ մարքսիստները շատ անգամ են հերքել այդ առասպելը»:... «Սեղծ էր հնչակյան սոցիալիզմը թե բովանդակութեան և թե գործելակերպի տեսակետից: Բարդ հասարակական պայմաններում զեզերող և Անգրեկովհասի ազգային ծանր մթնոլորտում նա չեր, վորը դուրս պիտի հաներ: Յեվ նա խորտակվեց, թողնելով մի առասպել, թե իր ծագման որից մարքսիզմի ներկայացուցիչն է յեղել հայութեան ծոցում: Կարծում ենք, վոր մեր հրատարակած վավերագրերը հերքում են այդ առասպելը^{***)} :

Յեվ իրոք այդ վերին աստիճանի հետաքրքիր վավերագրերը (թվով 23) շատ լավ վկայում և հաստատում են Հնչակյան կուսակցութեան և նրա լիդերների մարքսիստական լինելու առասպելը: Այդ վավերագրերը, վոր հանձնարարում ենք ընթերցողի ուշադրութեան, մեր յերկրի պրոլետարական կենտրոն Բագրի քաղաքի Հնչակյան մասնաճյուղերից մեկի (Բիրի-Հեյբաթի) արխիվից են, վոր ներկայումս գտնվում են Հայաստանի հեղափոխութեան թանգարանում. նրանք մի ավելորդ անգամ ցույց են տալիս հնչակյանների նացիոնալիզմը և թե այն անհերքելի իրողութունը, վոր մեր յերկրի հայ բանվորութեան նորմալ զարգացման և շարժման պատմութեան մեջ ինչպիսի ունակցիոն, հակասոցիալիստական դեր է խաղացել այդ իրան «սոցիալիստ» և «մարքսիստ» հորջորջող կուսակցութեանը:

Հետաքրքիր են մանավանդ հանգուցյալ Ա. Մարտունու

*) Ընդգծումը մերն է Գ. Ղ.

**) Տես Մ. Կոսյան «Կոմմ. Մանիֆեստ», հոտաշարան, յերես IV, Յերեսն, 1927.

***) Տես Գ. Անանուն «Հնչակյանների հարումը Ռուսաստանի հեղափոխութեան և սոցիալիզմին», «Նորք» № 2, Յերեսն, 1923 թ., յերես 274, 280.

(Ա. Միասնիկյան) կարծիքն ու դիտողութունները հնչակյանների մասին: Նրա «Կուսակցութեանները գաղութահայութեան մեջ» գրքույկի մեջ կարդում ենք հետևյալ տողերը. «Անցյալում 1897 թվից հետո հնչակյանները վարպես ազգային-նացիոնալիստական կուսակցութեան տեղի տվին դաշնակցութեան» (եջ 101) «Հնչակ»-ը նույն «Կուսակց» է, սակայն ավելի պարուրված, ամենակարգից հենց պարուրված սոցիալիստական կեղծ ռդարեով» (եջ 116) (ընդգծումը մերն է. Գ. Ղ.)... «Հնչակյանների մեջ շարակամ տարրերը նրանց հին պարագլուխներն են, վորոնք փորձված գայլերի նման չեն թողնում իրենց վորսի ոճիքը»... «Բարովներն անցան զնացին: Բայց կան Սապահ-Գյուլյաններն ու Նազարբեկները: Պետք է նըրանց էլ անցկացնել»... «Քայքայված հնչակյանութեանը չէ, քավթառացած գավաճան լիդերները, գիտկնացած Յեղիկյաններն ու Սապահ-Գյուլյանները չեն, վոր կասեցնելու են հայ բանվորութեան սոցիալիստական-կոմմունիստական շարժումը, նրա առջընթացութեանը» և այլն (եջ 123): Ահա այսպիսի կարծիք է կազմել հանգուցյալ Ա. Մարտունին—այդ աչքի ընկնող խոհեմ և խելացի հայ բոլշևիկը հնչակյանների մասին: Նա իր գրքույկում բազմաթիվ քաղվածքներ է բերում վերջին տարիների հնչակյան թերթերից, հնչակյան «տեսաբանների» հորվածներից և գալիս է այն յեզրակացութեան, վոր «բացի խարդախութեանից, ստից ու կեղծիքից՝ Հնչակյաններն ընկել են սարսափելի խարխափումների, հակասութեանների անքակտելի ցանցերի մեջ:

«Հնչակյան Ամերիկան մի միտք է հայտնում, Փարիզն այլ Պարսկաստանն ուրիշ, Կովկասյանը՝ բոլորովին տարբեր բան» (եջ 119): «Մտքերի կատարյալ շփոթ, գաղափարների շիտափլավ: Ամենայն ինչ կա, բացի սոցիալիզմից, միջազգայնութեանից և խնդրի կոմմունիստական ըմբռնումից» (եջ 114): Սակայն Մարտունու այդ շատ ճիշտ դիտողութունների մեջ յես պետք է մի կորրեկտիվ, ուղղում մտցնեմ. «Մտքերի այդ շփոթը, գաղափարների այդ վիճակը, հակասութեանները, նացիոնալիզմը և զբա հետ նրանց խարդախութեանները, ստերը, կեղծիքը նոր չեն, կլասիկական են. նրանք հենց «Հնչակ»-ի հիմնադրութեան սկզբից մինչև մեր որերը հնչակյան լիդերների և կուսակցութեան (հագրվազուր բացառութեանների մասին չե խոսքը) պատմական գործունեութեան ուղեկից հատկանիշներն են յեղել, մի աղետաբեր շարիք, վոր նրանք Դաշնակցութեան հետ միասին 30 և ավելի տարիների ընթացքում բերել են մեր յերկրի հայ բանվորութեանը:

Վ թյան գլխին: Ուրիշներեց անցնենք հնչակյաններին. տեսնենք նրանք ինչ են ասում իրանց մասին*): Պարսկաստանի հնչակյանների պարագլուխ («ղիկատոր» գրում է Մարտունին. Գ. Դ.) Յեղիկյանը իր թնուցիկներեց մեկում, ուղղված «Ս.-Դ. Հնչակյան կուսակցության Մասնաճյուղերին և ընկերներին», գրում է. «Տաճկահայությունը այսօր բնավեր ու աստանդական գլուխ դնելու տեղ չունի: Ս.-Դ. Հնչակյաններս, վոր այդ ժողովրդին հասած զբժարատու թյանց պատասխանատու թյան մեջ մեծ բաժին ունենք, Ս.-Դ. Հնչակյաններս, վոր մեզ նման ուրիշների հետ միացած ներկա նույն անհեռատես ղեկավարների առաջնորդությամբ այդ ժողովուրդը բռնցիկներով սպանդանոց և այդ սպանդանոցից ազատվածներին ղեկավար Արարելայի անապատների հարավի կիզիչ արևի ճառագայթների տակ աստիճանաբար հատնելու և հարվելու, Ս.-Դ. Հնչակյաններս, ընկերներ, իրավունք չունինք այդ ժողովրդին մոռանալու»:

Հնչակյաններից մի ուրիշը՝ պ. Աստղունին «Արձագանք Փարսիկի» հնչակյան թերթում (23 մարտի 1924 թ.) գրում է հետևյալը.

«Մենք, հնչակյաններս, վորպես ամենահին մարքսիստներ (sic! Գ. Դ.), պետք է ամենին ավելի ունալ քաղաքականության հետևելինք: Բայց ընդունակ հանդիսացանք: Վոչ: Յերբեմն գովեցինք կամավորական շարժումը, յերբեմն Մեծ ու Միացած Հայաստանի կողմնակից դարձանք և ծափահարեցինք Դաշնակցական կառավարությունը, այժմ ել ջատագովում ենք Խորհրդային Հայաստանը և հույաներս դնում ենք Մոսկվայի վրա: Հապա կիլիխյում մեր գործած սխալները: Հապա Տաճկաստանում մեր գործած սխալները**): Բուրբ հայ ղիվանագետները իրար արժեն: Վոչ մեկը իրավունք չունի արդարանալու կամ հակառակորդին մեղադրելու»:

Հնչակյանի այս հրապարակությունը բացարձակ խոստովանությունը, այս առևելի ինքնադատափետումը Հնչակյան կուսակցության հիմնադիրները Խանազատներն ու Նազարբեկները միշտ աչքի առաջ պետք է ունենան:

*) Միանգամ ընդմիջտ հայտնում ենք, վոր Հնչակյան թերթերից քաղվածքները բերում ենք այստեղ Ա. Մարտունու (Ա. Մխանիկյանի) «Կուսակցությունները գաղութահայության մեջ» գրքից, Թիֆլ. 1924 թ. Պետհրատ:

***) «Սխալներ»... շատ մեղմ է ասված. քաղաքական վրձիրներ և վոչ սխալներ:

Անցյալում Բագվի Հնչակյան բանվորների մեջ աչքի ընկնող հնչակյաններից մեկը—Ահրեմանը (Սարգիս Քալաշյան) Հընչակյան կենտրոնի 1905 թ. հոկտեմբերին կուսակցության համագումարին (Պարսիկում) ներկայացրած գործունեության հաշվետու թյան առիթով այսպիսի ջախջախիչ տողեր է գրել.

«Կենտրոնը կատարել է մի շատ աննշան գործ՝ թե կովկասում և թե Թյուրքիայում:.. «Ինքը անկարող՝ Մասնաճյուղերի գործելու ինիցիատիվն է ցանկացել—ապարդյուն ջանք-աշխատել խեղտել: Յեվ մեկ խոսքով իսկ կենտրոնը չէ բացատրել «Հնչակ»-ում և իր հաշվի մեջ կուսակցության մեջ գոյություն ունեցող անարխիստ և սրա հիմնական պատճառները»: «Կովկասում կազմակերպությունները սարսափելի դժվարություններով են շրջապատված յեղել՝ կուսակցության մեջ: Կենտրոնը չէ արտահայտել հայ պրոլետարիատի շահերը և սրա պաշտպանությունը վորպես սոցիալ-դեմոկրատ չէ բացատրել: Յեվ նա չէր կարող անել՝ աչքի առաջ ունենալով այն աննորմալ և ցավալի պայմանները, վորոնց մեջ նա գտնվել է՝ անցյալի ցուցիկապես սրադիցիաների անխուսափելիությամբ եվ զորւրքամբ Հնչակյան կուսակցության մեջ» (ընդգծումը մերն է Գ. Դ.): «Փաստն այն է, վոր իրականությունը, հայ բանվորի շահը պահանջում է դուրս գալ այդ միանգամայն անարխիստական և իրեն համար վտանգավոր դրությունից: Յեվ դրանից նա դուրս կգա համարձակ»: «Փաստն այն է, վոր Կովկասում մարտնչող ու այլ վայրերում հարստահարվող հայ բանվորությունը չէ տեսել իրեն շահերի պաշտպան քաղաքական մարմինը ի դեմս կենտրոնի: Յեվ թող մարդիկ չզարմանան, վոր հայ բանվորը զգաց արդեն, վոր իրեն և կենտրոնի մեջ, հայ պրոլետարիատի իրեն վորոշ իղբալներին ու կենտրոնի և կուս. քառասյին դրություն մեջ սարեր ու ձորեր կան»:

«Բավական է վորքան «նախկին ձեռքը» հայ պրոլետարիատին տանջեցին: Սրան այլևս անհրաժեշտ է նոր ուղի, նոր կյանք՝ հին փրատակների վրա»*):

*) Տես վավերագրեր № 20 Բագվի Հնչակյան «Ընկեր» մասնաճյուղի (Բերի-Հեյրաթի) արևելի վավերագրերից», Նորք № 2 1923 թ. Գ. Անանունի հոդված:

Շատ ափսոս, վոր Ահրեմանը (Ս. Քալաշյան) Հնչակյան կուսակցության մեջ տիրող անարխիստի մասին խոսող այդ հազվագյուտ յիտանդուն յերիտաորդը ինքն էլ զոհ դարձավ շուտով անարխիստին և անարխիզմին: Հայ բանվորներից շատ շատերին է այլասեւել, զոհ տարել Հնչակյան կուսակցությունը... Գտնվելով մի բանի տարի հնչակյանների շարքերում՝ Քալաշյանը 1905

Ինչ կարող եք այս բոլոր փաստերի և իրողութունների դեմ ասել, Խանազատ: Դուք ամենքդ Հնչակյան կուսակցութեան հիմնադիրներդ, բացի Մարտիկ, 1905 թվի Ռուս. Հեղափոխութեան շրջանում և նրա սոցիալ-դեմոկրատական տակ անջատվեցիք ձեր «յերևելի սոցիալիստական-հեղափոխական կուսակցութեանից». նրա հիմնվելուց 20 տարուց հետո յերես շուտ ավիք, փախաք նրա շարքերից. ինչո՞ւ. վորովհետև դուք 1905 թվին, կարծես, համոզվեցիք վերջապես, վոր «Հնչակյան կուսակցութեանը, ինչպես դուք եք պրոս, անցյալում չունենալով այդ գործունեութեան (այսինքն սոցիալ-դեմոկրատական: Գ. Ղ.) համար վոչ մի հող և իր գործունեութեամբ սահմանված լինելով թյուրքահայաստանում՝ նացիոնալիստական եր և վոչ սոցիալ-դեմոկրատական». վորովհետև «փոքրամասնութեան» մնալով Պարիզի ձեր 1905 թ. հոկտեմբերի կուսակցական համագումարում՝ անջատվեցիք «մեծամասնութեանից», վորը շարունակում եր կանգնել հին դերքերի վրա, հին ուղին եր պաշտպանում: Դուք հեռացաք կուսակցութեանից, վորովհետև գտնում եիք, վոր «մեծամասնութեան անցած ընդունուցիսով վորոշվում եր թե միևնույն կուսակցութեանը, պահելով միևնույն, մեկ ընդհանուր կազմակերպութեան ձևն ու ամբողջականութեանը, պետք է միաժամանակ ծառայի յերկու հակառակ սկզբունքի թե սոցիալ-դեմոկրատական և թե նացիոնալիստական կողմի. Ռուսաստանում և թե միուս կողմից ել նաև նացիոնալիստական թյուրքահայաստանում», վորով ստեղծվում եր, ձեր իսկ կարծիքով, կուսակցութեան մեջ հակասական դրութեան (կարծես Հնչ. կուսակցութեանը յերբեք առաջ հակասութեանների և քառսի մեջ չե տեղերել...), դուք այդ պատճառով «հերոսական» քայլ եք անում (ավելի շուտ ձեր իսկ ստեղծած կուսակցական մեծամասնութեանից ջախջախված լինելուց հետո) և հայտարարում ձեր մանիֆեստում հետևյալ նշանակալից խոսքերը.

Թվի հեղափոխութեանից հետո անցնում ե Ռ. Ս.-Գ. Բ. Կ.-եան շարքերը: Այստեղ յերկար չե մնում: 1906 թվին նրան տեսնում ենք Բագվի անարխիստական մեծամասնության խմբակում, վորի հիմնադիրն եր նա. նա այդ խմբակի ղեկավարն եր: Կատարվում են բազմաթիվ անարխիստական-տերրորիստական ակտեր: Բագվի բուրժուազիայի նյութական և Գաշակցութեան ուղղական աջակցութեամբ ստեղծվում ե «կանաչ հարյուրակ» անունով մի կազմակերպութեան հայասի դաշնակցական խմբապետ Թադ. Ամիրջանի գլխավորութեամբ, վորի նպատակն եր բնաջինջ անել անարխիստներին. այդ նրան, կարելի է ասել, հաջողվում է: Նրանց ձեռքով Մարգիս Բայաշյանն ևս որը ցերեկով հայոց յեկեղեցու առաջ սպանվում ե հոկտ. 5-ին 1906 թ.

«Մենք իբրեւ ամուսնացած սոցիալ-դեմոկրատներ, հայտարարում ենք, վոր այլեւս անկարող ենք համարում գործել Հնչակյան կուսակցության շարքերում, ուսի ել հրաժարվում ենք այդ կուսակցության անդամակցությունից»*):

Հասկանում եք արդյոք, սա ինչ եր նշանակում. սա նշանակում եր 20 տարուց հետո խաչ դնել ձեր իսկ հիմնած կուսակցութեան վրա, ձեր անցյալ գործունեութեան վրա, վորը դուք յերևակայել եք թե «սոցիալիստական» կուսակցութեան եք հիմնել, մինչդեռ «հիմքում ամենամաքուր ազգայնականներ» եիք և յերբ այդ բանում համոզվեցիք 20 տարուց հետո, դուք ազգայնական մեծամասնութեան հարվածների տակ ջախջախվելուց հետո՝ հարկադրված ձեզ տեսաք հրաժարվելու կուսակցութեան անդամակցութեանից:

«Մի ուրիշ սեպիր թղթից, դարձյալ գրված Ավ. Նազարբեկի ձեռքով, յերևում է, վոր անգամ հնչակյան պատգամավորների փոքրամասնութեան մեջ չի տիրել կարծիքների միանմանութեան, մանավանդ կազմակերպչական խնդրում: Ավ. Նազարբեկը առաջարկելիս է յեղել հնչակյանութեանից հեռացածներին կոչվել «Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատ. Բանվ. կուսակցութեան Հայկական կազմակերպութեան», Գլխավր՝ «Ռ. Ս. Գ. Բ. Կ.—Նախկին հնչակյաններ», Հաջի Թորոս (Ռ. Խանազատ. Գ. Ղ.), Ասպետ՝ «Ռուսաստանի Հայկական Սոց. Գեմ. կազմակերպութեան» և այլն**):

Այստեղից պարզ յերևում է, վոր «փոքրամասնութեանը», ձգտելով հեռանալ Հնչակյան կուսակցութեանից՝ ցանկացել է իր հին հնչակյան ֆիրմայի անունը և raison d'être-ը պահպանել: Նա շատ շատ կարող եր ստեղծել հայ իրականութեան մեջ մի «Բունդ»-իկ, հայ «սպեցիֆիկներ» կազմակերպութեան նման մի կազմակերպութեան կամ միանալ վերջինիս հետ: Բայց «փոքրամասնութեան» պատկանող անդամները սակավաթիվ խմբակ ներկայացնելով իրանցից, ցերուցան յեղան, վոմանք նրանցից մտան

*) «Փոքրամասնութեան» այդ մանիֆեստը, վորից գրեթե բառացի մի բանի տող առաջ բերեցի, ուղղված է Հնչակյան կուսակցութեան. դա Ավ. Նազարբեկյանի ձեռքով գրված մի սեպիրութեան է, վորը գտնվում է Հայաստանի Հեղափոխութեան թանգարանում: Յերբեիցե նա հրատարակվել է թե վոչ, հայտնի չե. դա կազմում է «Նորք» № 2 գրքում հրատարակված վավերագրերից № 22.

***) Տես «Նորք» № 2, յերես 279, 280.

Ռ. Ս.-Դ. Բ. Կուսակցութեան, վճարանք ել «սպեցիֆիկները» շարքերը: Նրանք, այդ անշատվածները մնացին, այնուամենայնիվ, հնչակ-
 յաններ, հնչակյան իղեղողիական շիրթի ու քառսի մեջ, հնչակ-
 յան ավանդութունների ազդեցութեան տակ, ինչպես այդ պարզ
 ու վորոշ նկատելի և հենց այսօր նրանց դատողութուններից,
 նրանց քաղաքական դիրքերից: Անշատվածները և թե չանշատ-
 վածները մի սանդրի կտավ են: Горбатаго могила исправит:
 Ահա տեսեք և հիացեք նրանց մարգարտաշար «սոցիալիզմով»
 և «կոմունիզմով»:

Հնչակյան «Յերիտասարդ Հայաստանը» իր 1924 թ. մարտի
 19-ի խմբագրականի վերջում գրում է. «Ազատ, Անկախ, Սոցիա-
 լիստ Հայաստան» մասնիկը Սոցիալիստ Հանրապետութունների
 Միութեան: Ինչ էլ վոր լինի, պատմութունը, մի ոտ, ճակատ
 ճակատ պիտի կանգնեցնի ճիշտ ել նոր ուլթերը՝ ընդհանուր Պրո-
 լետարական Հեղափոխութեան աստիճանաշարով:
 «Յեզ հետո՝ յերբ Ընձաքյարի, Սիփանի, Ներքովդի, Գրգու-
 ուի, Սեզի վրա ևլ կծածանի Սոցիալիստական Խորհրդային Կար-
 միր դրոշը, յերբ Արածանիի ջուրերը Արաքսի ալիքները կհամ-
 բուրեն ու ընդհանուր, համամարդկային ներդաշնակութունը
 կստեղծվի Հայաստանի այդ մասի իրականութեան մեջ ել—նրա-
 նից հետոյ յե, վոր մենք մեզ հարց կտանք թե՛ ինչ անենք:
 Իսկ մինչ այդ անհոն գործ, ծով անելիք ունինք»:

Ինչ ասել հնչակյան «սոցիալիստական մտքի» այս հոսնո-
 սական բանաստեղծութեան առիթով: Մի անգամ «Բունդ» կու-
 սակցութեան անգամ մի տիկին վեճի է բռնվում հանդուցյալ Գ.
 Վ. Պլեխանովի հետ. վեճի առարկան է լինում «Բունդի» ուղղու-
 թունը, վորի նկատմամբ Պլեխանովը բացասական վերաբերմունք
 ունի, համարելով «Բունդ»-ը վորպես նացիոնալիստական մի կազ-
 մակերպութուն: Տիկինը բուռն կերպով պաշտպանում է «Բունդ»-ի
 սոցիալիստական լինելը և ջանում ջրել Պլեխանովի կարծիքը:
 «Բունդ»-ի և Սիոնիստական կուսակցութեան մեջ այն տարբե-
 բութունը կա, սրախոսելով պատասխանում է Պլեխանովը, վոր
 սիոնիստները ձգտում են հրեական թագավորութունը վերա-
 կանգնել Պաղեստինում, իսկ «Բունդովցիները» — Միսսիում: Տի-
 կինը զինաթափվում է և ծիծաղը դեմքին՝ դադարում վիճել:

Հնչակյանները և դաշնակցականները սիոնիստների նման
 «սոցիալիստներ» են յեղել միշտ. առաջինները ձախ թևի, իսկ
 յերկրորդները աջ թևի սիոնիստներ. միայն այն տարբերութեամբ,

վոր մինչդեռ դաշնակցականները ձգտել են ստեղծել «Անկախ,
 ծովից ծով Միացյալ Հայաստան», Հնչակյանները ձգտել են, բացի
 դրանից, ստեղծել նաև Սիփանի, Ներքովդի, Գրգուուի և այլ սարերի
 դիլին, ինչպես և «Պատմական Հայրենիքից» դուրս Բագվում,
 Սիմֆերոպոլում, Նոր-Նախիջևանում, ամենուրեք ուր հայկա—մի
 «Սոցիալիստական Պան-Արմենիա»: Այսպիսի «հոսնոս սոցիալիստ-
 ներ» են յեղել միշտ հնչակյանները:

Յես չեմ կարող այստեղ չմատնանշել պատմական մի իրո-
 դութուն: Ռուսաստանի առաջին հեղափոխութեան շրջանում
 (1905 թվից հետո), յերբ հնչակյաններից բավական թվով ան-
 հատներ մտան Ռ. Ս.-Դ. Բ.-Կուսակցութեան շարքերը, դա ընդ-
 հանուր առմամբ ավելի չարիք եր քան բարիք բանվորական կու-
 սակցութեան համար, վորովհետև նրանք իրանց հետ բերում էին
 հնչակյան ավանդական գործելակերպը, նացիոնալիստական, հա-
 կաբանվորական տրամադրութուններն ու արարքները, վորոնց
 դեմ հարկ եր լինում սոցիալ-դեմոկրատիային պայքարել:

Ինչ են ավել հայ ժողովրդին բացի չարիքից հնչակյանները
 և դաշնակցականները: Նրանք իրանց արկածախնդրական գործե-
 լակերպը սեղափոխեցին Տաճկահայաստանից Ռուսաստան—Կով-
 կասի հայաբնակ վայրերը: Կարգացեք, յեթե չեք կարդացել, մեր
 պատմաբան Լեո-ի «Անցյալից» մեծածավալ գիրքը, վորի մեջ
 կգտնեք հնչակյանների և դաշնակցականների արկածախնդրու-
 թեան հարյուրավոր փաստեր ու ղեպքեր, մի զարհուրելի գործու-
 նութուն, վորը կարող է վոչ թե սոցիալիստի, մարքսիստի կամ
 դեմոկրատի, այլ և ամեն մի կարգին, առողջամիտ մարդու բանա-
 կանութունը և խիղճը հուզել:

Պատմաբան Լեոն վոչ սոցիալիստ է, վոչ մարքսիստ և վոչ
 էլ հեղափոխական. բայց նա վորպես պատմաբան կարող եր միայն,
 ինչպես ինձ թվում է, ղեկավարվել բացառապես օրինկտիվ հետա-
 դոտութեան հոգսով, անաշարութեան սկզբունքով: Ահա թե ինչ է
 նա էլ գրում հնչակյանների մասին. «Հնչակյան կուսակցութեան
 մկրտարանը, թե ունեցել է կնքահայրութուն, նրա ներկայա-
 ցուցիչը Մարքսը չէ յեղել, այլ ուստաց Գարդինիլովսյունը, հան-
 ձին Բակունինի, Տկաչևի և ուրիշների: Իբրև ուստահայեր, կըր-
 թված ուստական դարոցներում, «Հնչակ»-ի հիմնադիրները ժը-
 նևում գտնվում էին ուստ եմիգրանտների այն թեկի ազդեցու-
 թեան տակ, վորի հեղափոխական աշխարհայացքների դեմ պայ-

քարում եր Պլեխանովը*)։ Յես յերկու ձեռքով ստորագրում եմ
 Լեոնի այս խոսքերի տակ. մի իրողություն, վորի մասին առիթ ե
 յեղել ինձ անցյալում արասնայովելու վորպես ժընեի խմբին
 առաջին ամիսներին մոտ կանգնած և նրան լավ ճանաչած կեն-
 դանի մի վկա։ Լեոն շարունակում ե. «Հնչակ»-ը իր ուսուցիչ ան-
 վանում եր Բաֆֆին։ Յեվ այս ճիշտ եր շատ մեծ չափերով։
 Բաֆֆիի «Կայծեր»-ի մեջ եր կուսակցությունը գտնում իր հայ-
 գուկային ռազմագիտությունը։ «Կայծեր»-ի հերոսների անուն-
 ները գտնում եին հնչակյան հեղափոխական գործիչների կեղծ-
 անուններ։ Յեվ յերբ այս այսպես ե, նշանակում ե թե Մարքսը
 չէր կարող լինել հնչակյանության ուսուցիչը։ Նա հանդես եր
 գալիս ծրագրի մեջ Բաֆֆին զարգարելու համար։ Յեվ այս զար-
 դարանքից հնչակյանները յերբեք չհրաժարվեցին, մինչև վերջն
 անվանում եին իրանց սոցիալ-դեմոկրատ**) (Տես «Անցյալից»
 եջ 71,72)։

Ահա թե ինչու մե և հնչակյանության ետեթյունը։

Սակայն խանազանները, Նազարբեկները, Մապահ-Գյուլյան-
 ները շարունակում են մինչև այսօր թմբուկ զարկել թե իրանք
 հենց սկզբից սոցիալիստներ, մարքսիստներ են յեղել և վոչ նա-
 ցիոնալիստներ։ Միայն 1927 թվին խանազատը փոխեց մի քիչ
 իր մուգիկան. բանից դուրս ե գալիս, վոր «Հնչակ»-ի հիմնադր-
 ները յեղել են միաժամանակ «նարողովոյցիներ, մարքսիստներ
 և հիմքում ամենամաքուր ազգայնականներ»։ Բայց խանազա-
 տին վերջերս գերազանցեցին ուրիշները. рекорд побил Ենդիթենը։
 խանազատը, ինարկե, կճանաչի նրան իր խոսելու ձևից և տո-
 նից։ Ահա թե ինչ եր գրում Ենդիթեն կոչված այդ պարոնը հըն-
 չակյան «Յերիտասարդ Հայաստան» թերթում 1924 թ. մարտի
 1-ին։

«Փաստն ե, իրողության և իրականության պատմության
 տվիքների վրա հաստատված թեզն ե, վոր սոցիալ-դեմոկրատ

*) Յեվ ամբողջ «Освобождение Труда»-ի Գրուպան, կավեցաններ
 մենք։

**) Նրանք սկսեցին իրանց անվանել սոցիալ-դեմոկրատներ միայն մի
 քանի տարից հետո, յերբ ամեն գույնի նարողնիկությունը թե գաղափարակա-
 նորեն և թե կազմակերպչորեն քայքայվել եր և սոցիալ-դեմոկրատիզմը սկսել
 եր ըլոր Ֆրոնտներում հաղթանակ տանել։ «Հնչակ»-ի ղեկավարները հեղա-
 փոխական նարողնիկության ավելի բացասական կողմերն յիւրացնելով՝ հենց
 իսկ առաջին տարիներից հեղափոխական արկածախնդրության ուղիով ընթա-
 ցան. հետևապես չէին կարող այդ ժամանակ Բաֆֆիի «Կայծեր»-ի հերոսների
 գործելակերպին չհամակերպել իրանց գործելակերպը։

Հնչակյան կուսակցությունը, նրա գործիչ-գրիչներն են, վոր «Հայ
 Կոմունիստների, Հայ Մարքսիստների» պատմական նախահայ-
 բերը, նախորդներն են յեղել, և յեն ու կմնան։ Հակաթեզերը
 թող մեջտեղ գան, և մենք ել ավելի հանգամանորեն կմանրամա-
 անենք։

Ուրեմն, Սոցիալիզմի պատմականին գալով՝ հաստատում, պըն-
 դում, ասում ենք վորպես արմատական ճշմարտություն, վոր Գի-
 տական Սոցիալիզմի, Մարքսիստական Կոմունիզմի գաղափարա-
 բանությունն ու տեսությունը, առաջին անգամ, Հայ մտածմուն-
 քի, նորագույն Հայ գրականության, նորագույն Հայ պատմու-
 թյան բաժինն ու ազդակն ե դարձրել Սոցիալ դեմոկրատ Հնչա-
 կյան կուսակցությունը։

Սա արդեն մտքի ծայրահեղ սանձարձակություն ե։ Մենք
 նորից ապացույցներ բերելու և կրկնելու կարիք չենք զգում հաս-
 տատելու, վոր «Հնչակ»-ի հիմնադիրները, Հնչակյան կուսակցու-
 թյունը ընդհանուր վոչինչ չեն ունեցել մարքսիզմի, սոցիալիզմի,
 կոմունիզմի հետ։ Տասնյակ տարիների ընթացքում նրանք, հա-
 նուն թյուր հասկացված «ազգային հարց»-ի, մտքերի այնպիսի
 խառնաշփոթություն են առաջ բերել հայ հասարակության դե-
 մոկրատիկ տարրերի մեջ, այնպիսի ռեակցիոն մտածելակերպ են
 ավանդել հայ բանվորության, վորոնց համար նրանք պատմու-
 թյան դատաստանի առաջ պետք ե կանգնեն վոչ թե վորպես
 մարքսիստներ, սոցիալիստներ, այլ արկածախնդիր ուտոպիստներ,
 հակահեղափոխության սատարող նացիոնալիստներ։

Հայ իրականության առաջին սոցիալիստներն ու մարքսիստ-
 ները վոչ թե հնչակիստներն են, այլ այն հայ բանվորները և
 ինտելլիգենտները, վորոնք 90-ական թվականներից նախ ան-
 հատներով, ապա փոքր ինչ հետո խմբերով, լծված լինելով ցա-
 րական Ռուսաստանի դաժան քաղաքական կովին՝ հալածվել են,
 բանտերը նետվել, աքսորվել Սիբիր և Ռուսաստանի Նյուսիսային
 նահանգները, զոհվել են հեղափոխության և սոցիալիզմի վսեմ
 իդեալների համար։ Հնչակյանները չեն, այլ Կոմունիստները, Դե-
 դուշկանները, Շահումեանները, Զուրբաբյանները, Սպանդարյան-
 ները և այլն հայ իրականության առաջին սոցիալիստները և
 մարքսիստները գործնական և թե գաղափարական բնագավառ-
 ներում։

Ընկ. Ս. Կասյանի «Սպեցիֆիզմի» մասին վերջերս հրատա-
 րակած գրքում կարգում ենք. «Խեղաքյուրել պատմությունը, կեղ-

ձեյ իրականությունը, կուրահայ աչք ծակող փաստերի առջեւ... միայն նրա համար, վորպես զի կարելի լինի մեծարել, փառաբանել, վրոկեզոծել իրենց խմբական յետը»*) (և իրենց անհատական յետը, կապիւղացնեմ յես. Գ. Դ.), ահա ճշմարիտ, գեղեցիկ խոսքեր, վորոնք ամբողջապես կարելի է վերագրել և հնչակյաններին. պատժութեան կեղծարարութեան և ալլասերման հիվանդոտ յերևույթը, վորի դեմ անհրաժեշտ է ամենախիստ պայքար մղել, չափազանց աչքի է ընկնում ներկայումս:

Ինչո՞վ են տարբերվել հնչակյանները դաշնակցականներէց: Ծրագրով. բայց հնչակյան ծրագիրը գրեթէ ամբողջապես արտագրված է յեղել նարսիվովըցիններէ ծրագրից. և յեթե նրա մեջ կա խոսք սոցիալիզմի մասին, կա և Դաշնակցութեան ծրագրի մեջ: Գործելակերպով. յերկուսի գործելակերպն էլ բոլորովին համանման են յեղել իրար. նույն անհատական տերրորը, նույն հայդուկային—ուզմական սխրագործութեանները, նույն արկածախնդրական, հակահեղափոխական արարքներն ու գործերը: Կուսակցութեան սոցիալական կազմով արդյոք. յերկուսի սոցիալական կազմի մեջ ամենևին տարբերութեան չի յեղել. հասարակութեան նույն մանր-բուրժուազական հետամնաց, ալլասերված մութ ուլտերը, նույն ապագասակարգայնացած հակաբանութեան, շտրեյխերեխերյան տարբերը: Նպատակով գուցէ. վոչ. յերկուսի նպատակն էլ մեկ է յեղել. տաճկահայ ժողովրդի ազատագրումը («հայկական հարց»)-ի անվան տակ, վորի լուծումը հնարավոր է համարվել վոչ թե ժողովրդական մասսաների քաղաքական գիտակցութեան հեղափոխականացման և հեղափոխական ինքնագործութեան, այլ հայդուկային, հրոսակային ասպատակութեաններէ, հոսոսական զԱսի-հեղափոխական արկածախնդրութեան և Յեվրոպայի դեպլոմատիայի միջամտութեան ճանապարհով:

Բայց կա զարձյալ մի շատ կարևոր խնդիր, վորի առիթով կարիք կա մի յերկու խոսք ևս ասել:

Դաշնակցականները այն կարծիքին եին, վոր դաշնակցական «Անկախ» Հայաստանը, վորը ստեղծվել էր նրանց որով 1918—19 թ.թ. Դաշնակցութեան քաղաքական իդեոլոգիայի, «հեղափոխական» գործունեութեան պատուհն էր. իսկ Հնչակյանները, վորքան էլ դա տարրինակ չթվա, պնդում են ներկայումս, վոր «Անկախ»

*) Տես Ս, Կասյան—Սպեցիֆիկները և Սպեցիֆիզմը, Թիֆլիս, Զակ-կնիգա, 1928, յերես 19.

Սոցիալիստ Հայաստանի» (այսինքն «Սորհրդային Հայաստանի. Գ. Դ.») «վերագրութեան» նախաձեռնութեանը պատմականորեն պատկանում է հնչակյաններին: Ընթերցողին արդեն ծանոթ են-զիժենը գրում և հետևյալը.

«Ներկա քաղաքագիտական բառամթերքի մեջ, ինչպես և Մարքսիստական-Սոցիալիստական, «Անկախ» և «Քաղաքական ինքնավար յեզրերը հունանիւ են: Միևնույն է՝ մի յերկրի համար ասել «Անկախութեան» կամ «Քաղաքական Ինքնավարութեան»: Հետևաբար մենք իմաստի շեղում կատարած չենք, յերբ ասել ենք «Անկախ Հայաստան» կամ «Քաղաքական Ինքնավար Հայաստան»: «Միացյալ, Անկախ Հայաստան» յեզրը գործ ենք ածել 1916 թվից հետո զարձյալ առանց ընկրկելու մեր պաշտպանած պատմական թեղից. մենք Հայաստան ասելով չենք հասկացել, առաջին իր ծագման որից, միայն «Տաճկահայաստան», այլ ամբողջական-պատմական Հայաստան, — այսինքն Տաճկա-Հայաստան», «Ռուսսա-Հայաստան» և «Պարսկա-հայք» («Յերիտասարդ Հայաստան», 28 հունիսի 1924):

Այստեղ ուրեմն պաշտպանվում է «Քաղաքական Անկախութեան», «Քաղաքական Ինքնավարութեան», «Միացյալ Հայաստանի Անկախութեան» հունանիւ լինելու թեզը. մի քայլ ևս առաջ և հնչակյանների «Հայաստանի Քաղաքական Անկախութեան» նըշանարանը կարելի է հոմանիշ դարձնել ներկայումս գոյութեան ունեցող «Սորհրդային Հայաստանին». այդպես էլ անում է հընչակյան «Յերիտասարդ Հայաստանը». կարգացեք այդ թերթի 1924 թ. մարտի 19-ի խմբագրականի հետևյալ ապշեցուցիչ տղերը:

«Կա, գոյութեան ունի Ազատ, Անկախ, Սոցիալիստ Հայաստան. նա կա, գոյութեան ունի. դա վոչ վոք կարող է ժխտել, ուրանալ, խճբճանքի ինչ ճանապարհ էլ վոր բռնելու լինի: Զի կարելի մերժել, ուրանալ այն, ինչ վոր արդեն գոյութեան ունի և իրականութեան է:

Բայց այդ Ազատ, Անկախ, Սոցիալիստ Հայաստանի վերագոյութեան, վերահաստատման, վերածնունդի նախաձեռնութեանը պատմականորեն պատկանում է Սոց.-Դեմոկրատ Հնչակյան կուսակցութեան»:

Սրանով արդեն բավական է ճանաչել հնչակյան թերթերի և լիդերների խելապատակը:

Ներկա «ազատ, սոցիալիստ Հայաստանը» (ինչպես և վրաս-

տանի, Ազերբայժանի և Սորհրդային Միութեան միւս յերկիրնե-
րի հանրապետութիւնները) արդյունք է բացարձակապէս Ռու-
սաստանի Հեղափոխութեան և այդ հեղափոխութեան հետ կապ-
ված քաղաքական գործիչներին (նրանց հետ և հայ սոցիալդեմոկ-
րատ, կոմունիստ ընկերներին) հեղափոխական գործունեութեան:
Հնչակյանները և թէ դաշնակցականները այդ հեղափոխութեան
հետ վոչ մի կապ և առնչութիւն չեն ունեցել. նրա պատմութեան
մեջ նրանք միայն ռեակցիոն տարր են հանդիսացել. հետեւապէս
նրանք Կովկասահայ ժողովրդի քաղաքական ազատագրման գոր-
ծում իրանց հատկացրած դերը բացարձակապէս հրեշային պետք
է համարել:

Այդ մարդիկ ինչպէս քաղաքական խնդիրներում, այնպէս ել
հեղափոխութեան վերաբերյալ հարցերում շատ տարրինակ ըմ-
բռնում ունեն: Վերև խոսք յեղով այն մասին, թէ ինչպիսի
հասկացողութիւն ունի Սանազատը մարդկանց հեղափոխական
լինելու մասին (այսպէս որ. Յերեանի արխիբուրժուա զուր-
բերը, ըստ Սանազատի, «հեղափոխականներ» են յեղած): Բայց
մի ավելորդ անգամ ևս ցույց տալու համար թէ ինչպէս է նա
նայում առհասարակ սոցիալիստական գործունեութեան մասին,
յես կլիշեմ նրա իր բարեկամ ընկերոջ պրած 1903 թվակիր նա-
մակը: Այդ նամակում խոսելով այն մասին, վոր հնչակյանները
թյուրքահայ դատի նպատակահարմարութեան համար պետք է
մասնակցեն ռուսական հեղափոխական շարժումներին Կովկասում
(նա գրում է «սոխերի» շարժումներին. նա 2 անգամ գործ է
ածում այդ բառը, վոր նացիոնալիստական մտքի վուլգար մի
արտահայտութիւն է) խորհուրդ է տալիս սոցիալ-դեմոկրատ
հնչակյաններին լուրջ ուշադրութիւն դարձնել հարուստներին,
բուրժուաներին վրա, նրանց շրջաններում գործելուն տալառանձ-
նապէս կարևոր նշանակութիւն: «Նրանք (այսինքն հարուստ-
ները, բուրժուաները. Գ. Ղ.) չափազանց շահագրգռված են այժ-
մյան ռուսական շարժումներից, գրում է նա: Յեկ յեթե նրանցից
շատերը այդ բանը դեռ չեն հասկանում, հեղափոխական կազմա-
կերպութեան ամենամեծ գործերից մեկն էլ (ընդգծումը մերն է.
Գ. Ղ.) այդ հարուստների մեջ պրոպագանդա անելը պետք է
լինի»*):

Այդպիսով «սոցիալ-դեմոկրատ, մարքսիստ» Սանազատը

*) Տես «Նորք», գիրք N 2, 1923, յերես 283, վավերագիր N 1.

առաջարկում է սոցիալ-դեմոկրատական հեղափոխական կուսակ-
ցութեան՝ բուրժուաներին քաղաքականապէս կրթել, առաջար-
կում է սոցիալ-դեմոկրատին լինել միաժամանակ բանվոր և բուր-
ժուա դասակարգերի կազմակերպիչը և պրոպագանդիստը: Նա-
մակը ստորագրված է Հաջի Թորոս, վոր Սանազատի կեղծ անունն
է. նման «սոցիալիստական, մարքսիստական» մտքեր արտահայ-
տելու համար Սանազատին ավելի կսաղեր անվանվել Հաջի Փըս-
փըս քան թէ Հաջի Թորոս: Մանկութեան ժամանակից յես չեմ
մոռանում մի կարճահասակ տաճկահայի, վոր մոցիքուլութիւն էր
անում, յերբեմն էլ տիրացութիւն՝ ոգնում էր տերտերներին:
Թաղի յերեխաները նրա անունը դրել էին «Հաջի Փըսփըս» իր
տարրինակութիւններին, յերեխաներին խրատներ կարգալու շատ
անգամ ծիծաղաշարժ, մասխարա ձևերի համար:

Ահա և մեր հնչակյան «Հաջի Փըսփըս» Սանազատի մոցի-
քուլին հատուկ «մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական» հիշ-
շյալ միտքը քննադատութեան և յենթարկվում մինչև անգամ
աջակողմյան սոցիալ-դեմոկրատ Գ. Անանունի կողմից: Նա գրում
է այդ նամակի առիթով.

«Ինչ վոր պակասավոր և միամիտ էր նրա մեջ՝ (այսինքն
Սանազատի մեջ. Գ. Ղ.) դա հարուստների հետ կապված ակնկա-
լութիւնն էր: Այստեղից էլ յերևում է, վոր Սանազատը բան-
վոր դասակարգը չէր ընտրում իրրե միակ պատվանդան ու կրիչ
հեղափոխական շարժման և վոր նա ձգտում էր այդ շարժումը
ողտագործել նույն թյուրքահայ դատի համար և յերբեք նպա-
տակ չուներ հրահրել բանվորական շարժման ինքնամփոփու-
թիւնը»*):

Ահա մի շատ տեղին և ճշմարիտ բնորոշում հնչակյան քա-
ղաքականութեան և «սոցիալիստական» գործելակերպի ռուսահայ
իրականութեան մեջ: Սանազատը իր այդ մտածելակերպով հան-
դիսանում է մի մանր բուրժուազական գործիչ. նա իր նամա-
կում հանձնարարում է սոցիալ-դեմոկրատ, հնչակյան ընկերոջ
կիրառել այնպիսի գործելակերպ, վոր հատուկ է մի մանր բուր-
ժուազական կուսակցութեան, ինչպիսին է և յեղել և միշտ չըն-
չակյան կուսակցութիւնը:

Բայց ամենավատն ու քսամեկին այն է, վոր Սանազատը
Պիղատոսի դերի մեջ է մտնում, ձեռքերը լվանում, ասելով «յես

*) Տես նոյն տեղ, յերես 277.

անպարտ եմ»: Եւ իր «Յերկու խոսք» նախաբանում այդ «անպարտ լինելու» թեորիան է առաջ կոչում, մի թեորիա, վոր վոչ մի կապ չէ կարող ունենալ մարքսիզմի հետ:

Եւ գրում է. «Շատ իրավացի է Հեգելի այն միտքը թե պատմութեան ընթացքում տեղի ունեցած բոլոր յերևույթները իրանց raison d'être-ն ունեն, այսինքն ժամանակի պայմաններն այնպես են յեղել, վոր յերևույթը չէր կարող ուրիշ կերպ լինել քան յեղել է: Պատմութեանը միշտ պետք է հասկանալ և վոչ քննադատել այն մտքով թե նա կարող եր ուրիշ ընթացք ունենալ, բայց չէ ունեցել գործիչների ապիկարութեան պատճառով: Յերբեք չպետք է մոռնալ, վոր պատմութեան մեջ գործիչներէց շատ ավելի մեծ գործոններ են հանդիսանում ժամանակի և տեղի տնտեսական պայմանները և ժողովրդի մտավոր զարգացման աստիճանը»:

Ճիշտ է, իհարկէ, վոր «պատմութեան մեջ գործիչներէց շատ ավելի մեծ գործոններ հանդիսանում են ժամանակի և տեղի տնտեսական պայմանները և ժողովրդի մտավոր զարգացման աստիճանը»: Բայց միթէ Խանազատի հասկացված գործիչները այն տիպի մարդկանցից են, վոր չգիտակցին, չճանաչին ժամանակի և տեղի տնտեսական պայմաններն ու ժողովրդի մտավոր զարգացման աստիճանը և ըստ այնմ չնախորոշին իրանց վարքագիծը: Ինչպես յերևում է Խանազատի գործիչները «Հնչակ»-ի հիմնադիրների պէս անգլուխ, անվորոշ մարդիկ են: Չէ վոր մարդիկն են ստեղծում պատմութեանը. գործիչների գիտակցութեանը եմ կամքը շատ մեծ դեր է խաղացել պատմութեան մեջ և յեթէ նրանք հաղթահարվել են կյանքում, նշանակում է կոխվել անհավասար է յեղել և այդ դեպքում նրանք գոհեր են տվել, արյուն թափել, բանտ նստել, աքսորվել, կախաղան են բարձրացել: Այստեղ, իհարկէ, «ապիկարութեան» մասին խոսք չէ կարող լինել: Բայց յերբ գործիչները նախորոք չեն ձեռն, կշռում իրանց անելիքը—իրանց արարքներով, իրանց գործելակերպով մեծամեծ չարիքներ են հասցնում այն գործին, վորի անուսով են հանդես յեկել հասարակական ասպարեզ, աջակցելով իշխող դասակարգերի գործի հաղթութեան, այդ դեպքում, վոր մարքսիստը կհամարձակվի լռելու նրանց ապիկարութեան մասին:

Վերջին համաշխարհային պատերազմի ժամանակ սոցիալիստ շատ անհատներ և խմբեր իրանց գործելակերպով «ապիկարութեան» բազմաթիվ ապացույցներ տվեցին: Գերմանական և ավ-

ստրիական սոցիալ-դեմոկրատները մեծամասնութեանը պիտավորութեամբ Շեյքեմանների, Զուգեկուսների և այլոց կայգերի յունկերական կառավարութեան հետ ձեռք ձեռքի տված՝ պաշտպան հանդիսացան վոչ թէ միջազգային պրոլետարիատի, այլ կայգերական մոնարխիայի շահերը: Այդպիսի շատ դեպքեր և որինակներ կարելի է բերել: Ուրեմն «հնչակյան մարքսիստ» Խանազատի կարծիքով նրանց ապիկարութեանը, դավաճանութեանը կարելի է քննադատել, դատապարտել, այլ «միմիայն պետք է նրանց գործը բացատրել և հասկանալ»...

Մարդիկ մի քանի տասնյակ տարի շարունակ հեղինակ և դեկավար հանդիսանալով մի գործի, վորը խայտառակ ֆիասկո-ի հանգեց և վորի հետևանքը մի ամբողջ ժողովրդի բնաջնջումն յեղավ, դուրս են գալիս այսօր, 40 տարից յետո, իրանց գործը արդարացնելու համար իրանց նեցուկ և պաշտպան են կանչում «անպարտ լինելու» թեորիան, վերագրելով անհաջողութեանը ամբողջապես «մեծ գործոններին», վորոնց անգիտակ հենց իրանք են յեղել...

Գլխի մազերը վետելը, վնայ ու հարսյ կանչելը կատարված աղետի հանգեպ, հանցանքի խոստովանելը, վերջապես լռել ու պապանձվելը ավելի մեծ առաքինութեան է քան հանցանք չճանաչելը, ուրանալը. իսկ ինքը զինքը արդարացնելը այդ պարագայում մի քստմեղի վարմունք է: Այս բարոյական և քաղաքական գաճաճութեանն է, վոր հատուկ է յեղել միշտ «Հնչակ»-ի ջոջերին և վորով նրանք մինչև այսօր դեռ շարունակում են փայլել:

Խանազատը գերեզմանի շեմքին մոտեցած՝ իր զոգոջուն ձեռքով գրում է գարձալ այսպիսի մի բան իր «Յերկու խոսք»-ի մեջ. «1905 թվականից հեռացած լինելով Հնչակյան կուսակցութեանից, միաժամանակ հեռացել եմ ամեն մի քաղաքական կուսակցութեանից ու յեղել եմ շարունակ դիտողի դերում»: Դարձյալ մի նոր սուտ: Խանազատը և նրա հետ միաժամանակ մի քանի հնչակյաններ 1905 թվի հեղափոխութեան որերին դիմեցին Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպութեան կոմիտեին իրենց կուսակցութեան անդամ ընդունելու խնդիրքով: Կոմիտեի մի բազմամարդ ժողովում, վորին նախագահում էր տողերիս զրոյը, Խանազատի թեկնածութեանը ձայների մեծամասնութեամբ անցավ և նա ընտրվեց անգամ: Այնուհետև Խանազատը մինչև 1907 թ. աշունքը, յերբ յես ստիպված յեղա յերկար ժամանակով հեռանալ Թիֆլիսից քաղաքական պատճառներով, շա-

րունակում եր ֆնալ Թիֆլիսի ս.-դ. կազմակերպության անդամ: Յեթե դուք, Սանազատ, «մոռացել եք», յես կյիշեցնեմ ձեզ 1907 թվին Արշակ Զոհրաբյանի բնակարանում տեղի ունեցած ս.-դ. համաժողովը, վորտեղ ներկա եին մի քանի վրացի ընկերներ ժողովանիայի գլխավորութամբ, ինչպես և հայ ընկերներից Շահումյանը և ուրիշները. ներկա եիք և դուք *): Յես կյիշեցնեմ ձեզ մինչև անգամ վիճարանության ժամանակ կարդիմալ («կարդի-նալ» ձեր արտասանած խոսքն և) հարցերի վրա ուշք դարձնե-լու ձեր առաջարկը: «Մոռացել եք» արդյոք: «Դիտողի դերունն ևմ յեղել»... սա քանի յերորդ սուտն և, վորոնց դուք շարունակա-բար դիմել եք ձեր ամբողջ կյանքի ընթացքում:

Ե՛հ, ի՛նչ կարող եք պահանջել մի մարդուց, վորը այսոր իրեև պարծանք հրապարակով հայտարարում և թե ինքը «մաս-նակցել և մեր՝ ամենագլխավոր յերկու Հնչակյան և Դաշնակցու-թյան կուսակցությունների հիմնադրության գործին»: Կի ինչ քա-ղաքական համոզմունք պահանջել մեկից, վորը միաժամանակ հիմնադիր և յեղել յերկու կուսակցությունների:

Հնչակյանների «սոցիալիզմը, մարքսիզմը» այն տեսակից և, վորի նմանը չկա աշխարհի յերեսին և վորը միայն հատուկ և իրանց հնչակյաններին: Ավելի յերկար կանգ առնել այդ բանը ապացուցանելու, իմաստ չունի: Պատմական հետադոտության նպատակ յես չեմ ունեցել: Ամփոփելու կարիք ել չկա այն բոլո-րի, ինչ վոր ասվեց մինչև այժմ հնչակյանության մասին: Պարզ և հասկանալի և այժմ ամեն մի հայ սոցիալիստ բանվորին հըն-չակյանների և դաշնակցականների «սոցիալիզմը», նրանց «սոցիա-լիստական, հեղափոխական գործունեության» արդունքը ընդհան-բապեզ հայ ժողովրդի և մասնավորապես հայ բանվորության համար: Սանազատի և հնչակյան միուս ղոշերի իրանց մասին տարածած հեքիաթները, բացի կրեոլիստներից, այլևս վոչ վոքին չեն կարող այսոր խաբել, ևս առավել հայ պրոլետարիատին:

Յեթե յես կարողացա այս տողերը գրելու համբերությունն ունենալու, ճշմարիտը խոստովանել, դա ակամայից եր, հարկա-գրված ծանր մի աշխատություն ինձ համար: Դժվար թե յես

*) Արշակ Զոհրաբյանը բացակա էր Թիֆլիսից, Պետական Զ-րդ Դումայի անդամ եր և գտնվում եր այդ ժամանակ Պետերբուրգում (Լենինգրադ):

յերբեիցե դարձյալ վերադառնամ առանձնապես հնչակյաններին, հնչակյանության հարցերին: Դա տխուր պատմություն և և միան-գամայն ձանձրալի:

Այսքանն ել բավական և, ինչ վոր գրեցի:

Դեկտեմբեր, 1927 թ.
Թիֆլիս

Ծանոթություն: Այս գրությունը արդեն վերջացած եր, յերբ յես տեղեկություն ստացա այն մասին, վոր Սանա-զատը շարունակում և «Հայրենիք» ամսագրի հետևյալ հա-մարներում իր «հուշերը»: Այդ համարները, դժբաղտաբար, իմ ձեռքս չեն ընկել: Չեմ կարծում թե նա այսուհետև ավելին ասե «Հնչակ»-ի և Հնչակյան կուսակցության հիմ-նադրության մասին քան թե մինչև այժմ ասել և:





«Ազգային գրադարան»



NL0194526

